

ԷԹՆԻԿ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Ռուբեն Մելքոնյան

Թուրքիայում էթնիկ ծագման խնդիրը միշտ էլ զբաղեցրել է կենտրոնական տեղերից մեկը: Այսօր էլ այդ երկրում ընթացող մի շարք կարեւոր գործընթացների կիզակետում ժամանակ առ ժամանակ հայտնվում եւ ակտիվ շրջանառվում է էթնիկ ծագման հարցը՝ դառնալով քաղաքական գործիչների, վերլուծաբանների, մամուլի ուշադրության առարկա:

Էթնիկ ծագման խնդիրը տարբեր ինտենսիվությամբ, սակայն շարունակ գտնվում է Թուրքիայի ներքաղաքական օրակարգում, ուստի նմանատիպ օրինակներից հարկ ենք համարում անդրադառնալ ամենաթարմ դեպքին: Այսպես, 2009թ. մարտին Թուրքիայում նախատեսվում են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որոնցում իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) մեծ հավակնություններ ունի, որոնց մասին հայտարարել է վարչապետ Էրդողանը: Թեժ պայքար է սպասվում հատկապես Ստամբուլի քաղաքապետի ընտրությունների ժամանակ, որտեղ հիմնական մրցակիցները իշխող ԱԶԿ եւ ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺԻԿ) թեկնածուներն են: ԺԻԿ-ն Ստամբուլի քաղաքապետի համար առաջադրել է բավական ինքնատիպ մի քաղաքական գործչի՝ պատգամավոր Քեմալ Քըլըչդարօղլուն: Շատերի կարծիքով՝ բավական հավասարակշիռ, պինդ նյարդերի տեր Քըլըչդարօղլուն ներկայիս Թուրքիայի քաղաքական երկնականարում ծագող աստղերից է: Ջարմանալի չէ, որ նրա աճող հեղինակության դեմն առնելու եւ քվեները պակասեցնելու համար ընտրվեց էթնիկ ծագման հարցը: Քեմալ Քըլըչդարօղլուն ծագումով Դերսիմից է (ներկայումս՝ Թուրքիա), որը միշտ էլ հայտնի է եղել իր ըմբոստ նկարագրով: Եվ ահա իշխանական «Ջաման» թերթը նրան ներկայացնելիս՝ գործածել է հետեւյալ արտահայտությունը. «Ծնվել է Թուրքիայում, որը հայտնի է Դերսիմի խռովությամբ»: Առաջին հարվածը հասցված էր՝ նրա անունը կապվեց «խռովության, ահաբեկչության օրրանի» հետ, որին հաջորդեց շրջանառվող լուրը. «Քեմալ Քըլըչդարօղլուի մայրը հայ է՝ Յեմուշ անունով եւ ապրում է Դերսիմում»: Սա բառացիորեն դարձավ քաղաքական օրակարգի եւ մամուլի առանցքային նյութերից մեկը, եւ մի լրագրող «հետաքննող լրագրողական» ժանրին հատուկ մեթոդներով, զանգահա-

րելով Քըլըջդարոզլուի մորը՝ ուղղակիորեն հարցրել է. «Դուք հա՞յ եք»: Անակնկալ այս հարցին պատասխանել է վերջինիս դուստրը՝ ասելով. «Ոչ, մենք մուսուլման ենք»: Քըլըջդարոզլուի հայկական ծագման մասին լուրերն ավելի վաղ էլ էին շրջանառվում, սակայն դրանք ուժգնորեն արտահայտվեցին այն ժամանակ, երբ նա դարձավ քաղաքապետի թեկնածու: Սակայն այս հարցում եւս Քըլըջդարոզլուն պահպանեց իրեն բնորոշ հանգստությունը եւ շարունակ հնչող հարցերին օրերս տված իր մի քանի հարցազրույցներում պատասխանեց հետեւյալ կերպ. «Մայրս կարող է եւ հայ լինել, կամ քուրդ, կամ հույն, սակայն դրանից մեր մոր հանդեպ սերը չի պակասի»: Այսինքն՝ նա մի կողմից չհերքեց այդ փաստը, մյուս կողմից՝ փորձեց այն տեղափոխել այլ հարթություն՝ ավելացնելով նաեւ, որ մարդիկ հնարավորություն չունեն ընտրելու իրենց ռասան:

Չմոռանանք, որ նմանատիպ քաղաքական հնարքներ է գործադրում նաեւ հենց նույն ընդդիմադիր ԺՅԿ-ն, որի պատգամավորներից Ջանան Արըթմանը բոլորովին վերջերս նախագահ Գյուլին «մեղադրեց» հայկական ծագում ունենալու մեջ՝ նշելով, որ, իբրեւ թե, նրա մայրը հայ է: Չայտնի է, թե ինչ աղմուկ բարձրացավ այս հայտարարությունից հետո, սակայն, ի տարբերություն Քըլըջդարոզլուի՝ Գյուլը այս խնդրին բավական բուռն եւ էմոցիոնալ պատասխանեց. նախ նա հրապարակավ ասաց, որ իրենց տոհմը մուսուլման եւ թուրք է, իսկ այնուհետեւ մամուլում տպագրվեց նրանց տոհմածառը: Բացի այդ, նա հանդես եկավ Արըթմանի դեմ «սիմվոլիկ դատական հայցով»՝ իրեն վիրավորելու համար: Այս ամենը, այսինքն՝ ներքաղաքական պայքարում էթնիկ ծագման շահարկումը թե՛ իշխող եւ թե՛ ընդդիմադիր ուժերի կողմից էլ ավելի հակասական է թվում իշխող կուսակցության եւ մասնավորապես նրա առաջնորդ Էրդողանի բազմիցս հնչեցրած այն տեսակետի համատեքստում, թե իրենք դեմ են էթնիկ ազգայնականությանը:

Քըլըջդարոզլուի կենսագրության մեջ շատերի համար կասկածելի է թվում այն հանգամանքը, որ նա 1966թ. փոխել է իր նախկին Քարաբուլուք ազգանունը՝ այն պատճառաբանությամբ, որ իրենց ամբողջ գյուղը կրում էր նույն ազգանունը: Ըստ Քըլըջդարոզլուի, նրանց տոհմը Դերսիմի Քուրեյշան աշիրեթից է: Սակայն ուշագրավ է նաեւ, որ նա հետաքրքրվում է Դերսիմի պատմությամբ: Ինչպես հայտարարել է վերջերս՝ քաղաքականությունը թողնելուց հետո նա ցանկանում է զբաղվել Դերսիմի պատմությամբ, որի մասին բավական շատ աղբյուրներ եւ փաստեր է հավաքել: Մեր կարծիքով, Դերսիմի պատմությանը քաջատեղյակ լինելու հանգամանքն է, միգրացե, նրան դրդել կրքոտ կերպով չհերքել իր մոր հայկական ծագման հավանականությունը, քանի որ այդ պատմությունը լի է

հայկական ներկայությունը հաստատող փաստերով: Քըլըջդարօղլուհի անձի հետ կապված՝ կա մեկ այլ հետաքրքիր մանրամասն եւս. վերջերս հեռուստատեսային մի հաղորդման ժամանակ նա հայտարարեց, որ կինը իր մորաքրոջ աղջիկն է: Էնդոգամիայի այս երեւոյթը մի կողմից կարելի է պայմանավորել աշիրեթային սովորոյթներով, բայց մյուս կողմից՝ ենթադրյալ հայկական ծագմամբ մոր ազգականի հետ անուսնութիւնը մտորելու տեղիք է տալիս:

Էթնիկ ծագման խնդիրը չի շրջանցվում նաեւ ներկայումս Թուրքիայում ընթացող աղմկահարույց «Էրգենդըն» ահաբեկչական կառույցի դատավարութեան շրջանակներում: Պարզվել է, որ ձերբակալվածներից մեկը՝ Չատուկ օպերատիվ վարչութեան պետի նախկին տեղակալ Իբրահիմ Շահինը, հանձնարարութիւն է ստացել եւ աշխատել է տարբեր կուսակցութիւններում հայկական ծագում ունեցող մարդկանց հայտնաբերման եւ գրանցման գործով: Խուզարկութեան ժամանակ հայտնաբերված Շահինի նոթատետրում առկա է ցուցակ, որտեղ նշված են տվյալներ Թուրքիայի քաղաքական կյանքում բավական հայտնի մարդկանց էթնիկ ծագման մասին, որոնց համաձայն՝ Ազգայնական շարժում կուսակցութեան (ԱՇԿ, Գորշ գայլեր) նախագահ Դեւլեթ Բահչելին, Ժողովրդական հասարակարգ կուսակցութեան նախագահ Ահմեթ Թուրքը, ԱՇԿ պատգամավորներ Մեհմեթ Շանդըրը, Մեհմեթ Էյմուրը հայկական ծագում ունեն:

Էթնիկ պատկանելութեան հիմքի վրա միմյանց մեղադրելը, ի դեպ, նոր երեւոյթ չէ թուրքական իրականութեան մեջ եւ տարածված է հատկապէս ազգայնամոլների շրջանում. տարբեր ժամանակաշրջաններում ամենակարկառուն ազգայնամոլները միմյանց մեղադրել են ոչ թուրքական ծագում ունենալու մեջ: Թեմայի հանդէպ կոշտ եւ ծայրահեղական դիրքորոշում որդեգրած լրագրող Յուսուֆ Գեզգինը վերջերս հանդես գալով մամուլում՝ հայտարարել է, որ թուրքականութեան դիրքերից հանդես եկողներից, ավելին՝ այդ ուղղութեան հիմնադիրներից, գաղափարախոսներից եւ ոչ մեկը թուրք չէ:

Ակնհայտ է, որ Թուրքիայում էթնիկ ծագման հարցը նոր դրսեւորումներ է ստանում: Թուրք սոցիոլոգներից մեկը, անդրադառնալով լայն թափով շրջանառվող այս թեմային, այդ երեւոյթն իրավացիորեն դասել է թուրքական հասարակութիւնում տարածված հիվանդութիւնների շարքին:

Պետք է ասել, որ հաճախ էթնիկ ծագման հարցը Թուրքիան օգտագործում է իր արտաքին քաղաքականութեան մեջ: Այս համատեքստում՝ արժե հիշատակել նմանատիպ վերջին օրինակներից մեկը: Լոնդոնի ներկայիս քաղաքապետ Բորիս Ջոնսոնը թուրքական ծագման որոշակի

տոկոս ունի. նրա պապի հայրը Օսմանյան կայսրության վերջին շրջանում կրթության եւ ներքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցրած եւ հատկապես քեմալական շարժման դեմ թշնամական պահվածքով հայտնի լրագրող Ալի Քեմալն է: Հենց Աթաթուրքի գլխավորած շարժման դեմ թշնամական դիրքորոշման համար նա 1922թ. ձերբակալվել եւ բարձրաստիճան պաշտոնյաների հրահանգով լինչի դատաստանի է ենթարկվել: Ալի Քեմալը հայտարարվել է դավաճան, եւ, մեր կարծիքով, երկրորդական չի կարելի համարել նաեւ այն, որ դավաճանի նկարագիրն ամբողջացնելու համար շեշտվել է նրա՝ որոշ հարցերում ունեցած «հայամետ դիրքորոշումը»: Այսպես, նրա մեղքերի շարքում նշվում է, որ նա կողմ է եղել Օսմանյան կայսրության արեւելյան որոշ նահանգներ 6 միլիոն ոսկու դիմաց հայերին վաճառելուն: Անշուշտ, հենց այս հանգամանքով պետք է բացատրել որոշ շրջանակների կողմից նրան տրված, թերեւս, հեզնական մականունը՝ Արթին Քեմալ (Արթինը հայերեն Հարություն անձնանվան թուրքական ձեւն է): Ալի Քեմալի անգլուհի կնոջից ծնված որդին՝ Օսման Ալին, հոր սպանությունից հետո փոխում է անունը՝ դառնալով Վիլֆրեդ Ջոնսոն: Լոնդոնի ներկայիս քաղաքապետ Բորիս Ջոնսոնը հենց վերջինիս թոռն է: Սակայն այն բանից հետո, երբ թուրքի անգլիացած հետնորդը դարձել է եվրոպական մայրաքաղաքներից մեկի ղեկավարը, Թուրքիան հիշել է իր «մոռացված զավակին»: Բորիս Ջոնսոնը պաշտոնապես հրավիրվեց Թուրքիա, արժանացավ մեծ ընդունելության եւ պատվի, ավելին՝ մամուլում սկսվեց քննարկվել, թե արդյոք նրա պապի հայրն իրոք դավաճան էր: Այսինքն՝ Ջոնսոնի թուրքական արմատները մղելով առաջին պլան՝ թուրքական դիվանագիտությունը փորձում է օգտագործել դա ի շահ իրեն, մասնավորապես արտաքին քաղաքականության համատեքստում, եւ սա, միգուցե, տա նաեւ դրական արդյունք, քանի որ Լոնդոնի քաղաքապետը եւս շատ ջերմ է արձագանքել թուրքական սիրալիրություններին:

ԻՍՐԱՅԵԼԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑԸ

Սուրեն Մանուկյան

Հունվարի 29-ին, Դավոսի տնտեսական համաժողովի շրջանակներում՝ Գազայում Իսրայելի կողմից իրականացված գործողության քննարկման ժամանակ, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը բավական կոշտ մեղադրանքներ ներկայացրեց Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսին: Այս զգայական վեճը բացահայտեց Թուրքիայի եւ Իսրայելի հարաբերությունների սառեցումը եւ բարձրացրեց երկու երկրների հարաբերությունների ապագայի հարցը: Պարզ է դառնում, որ կողմերն անխուսափելիորեն վերաբժենորելու են սեփական քաղաքականության որոշ սկզբունքներ ու մոտեցումներ, եւ այս պարագայում վերլուծությունների մեջ հաճախ է հանդիպում Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հնարավորության քննարկումը:

Խորհրդանշական է, որ դավոսյան ընդհարման մեջ կա եւս մեկ, միգուցե աննշան նրբություն: Քննարկումը վարողը, որին վեճից հետո կազմակերպված ասուլիսին Էրդողանը կատարվածի ամենամեծ մեղավորը համարեց, «Վաշինգտոն փոստ»-ի աշխատակից, ազգությամբ հայ Դեյվիդ Իգնատիուսն էր:

Հրեաների կողմից Հայոց ցեղասպանությունը չճանաչելու երեւութը մշտապես հարցեր է առաջացրել: Մի պետություն, որը ստեղծվեց ցեղասպանությունն ապրած ժողովրդի կողմից, թվում էր, թե չպետք է որեւէ երկընտրանք կամ տատանում ունենար XX դարի առաջին ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հարցում: Մինչդեռ հակառակն է. Իսրայելը ոչ միայն չի ընդունում Հայոց ցեղասպանությունը, այլեւ որոշակիորեն խոչընդոտում է դրա ճանաչման գործընթացին, իսկ երբեմն հանդես է գալիս այն ժխտելու ուղղությամբ:

1982թ., երբ Թել Ավիվում կազմակերպվում էր Հոլոքոստին եւ ցեղասպանությանը նվիրված միջազգային գիտաժողով, թուրքական կառավարությունը բողոք ներկայացրեց Հայոց ցեղասպանության թեմայով զեկույցների առկայության դեմ: Իսրայելի Արտաքին գործերի նախարարությունը պահանջեց բացառել Հայոց ցեղասպանության վերաբերյալ ցանկացած ելույթ, քանզի դա կարող էր վնասել թուրք-իսրայելական

հարաբերություններին: Հոլոքոստը վերապրած, Նորեյյան մրցանակակիր էլի Կիզերը նույնիսկ հանվեց մասնակիցների ցանկից, իսկ գիտաժողովը մոտ էր տապալման: Սակայն այն կայացավ, իսկ Հայոց ցեղասպանության մասին խոսեց աշխարհի ամենահայտնի ցեղասպանագետներից մեկը՝ Իսրայել Չարնին, որին անձամբ նախարար Շինոն Պերեսը փորձել էր հանոզել՝ հրաժարվել այս հարցը բարձրացնելուց:

Ընդհանրապես Հայոց ցեղասպանության հարցի առնչությամբ Պերեսի անունը շատ անգամներ է հանդիպում: 2001թ. ապրիլին նա Իսրայելի արտգործնախարարի պաշտոնում թուրքիա կատարելիք այցից առաջ հարցազրույց տվեց թուրքական «Անատոլիա» լրատվական գործակալությանը՝ հայտարարելով. «Մենք մերժում ենք Հոլոքոստի եւ հայկական հավաստիացումների միջեւ նմանություն ստեղծելու փորձերը: Հոլոքոստը նման չէ ոչ մի բանի: Այն, ինչի միջով անցել են հայերը, ողբերգություն է, բայց ոչ՝ ցեղասպանություն»: Նա նաեւ կոչ արեց ավելի մեծ զգուշությամբ վերաբերվել նման հարցերին, որպեսզի չխեղաթյուրվի պատմական ճշմարտությունը: «Թըրքիչ դեյլի նյուզ» թերթում տպագրված այս հայտարարությունը բավական մեծ աղմուկ առաջացրեց, իսկ ամենատպալորիչ պատասխանը Շ.Պերեսին տվեց նույն Իսրայել Չարնին՝ 2001թ. ապրիլի 12-ի իր բաց նամակում: Հիշեցնելով, որ 2000թ. Ֆիլադելֆիայում Հոլոքոստին նվիրված գիտաժողովի ժամանակ բազմաթիվ ուսումնասիրողներ, այդ թվում նաեւ իսրայելական պատմաբաններ, հայտարարություն էին ստորագրել, որում հաստատում էին հայերի ցեղասպանության իրողությունը, իսկ ավելի վաղ՝ 1997թ., Ցեղասպանություններն ուսումնասիրողների ընկերակցությունն ամբողջ կազմով միաձայն քվեարկել էր մի բանաձեւի օգտին, որը սահմանում էր, որ հայերը լայնամասշտաբ ցեղասպանության են ենթարկվել, նա գրում էր. «Հայտնում են Ձեզ իմ մեծագույն հարգանքի հավաստիքը՝ Իսրայելի անվտանգության, զարգացման ու խաղաղության գործին Ձեր հսկայական ներդրման համար: Այնուամենայնիվ, ես երկար տարիներ չեմ կիսում Հայոց ցեղասպանության վերաբերյալ Ձեր դիրքորոշումը... Ինձ թվում է, որ Դուք անցել եք բարոյական այն սահմանը, որը չպետք է թույլ տա իրեն անցնել ոչ մի հրեա... Թեեւ ես համաձայն չեմ Ձեզ հետ, սակայն, հնարավոր է, որ Իսրայել պետության շահերի Ձեր ավելի լայն ընկալման պարագայում, Դուք պարտադրված եք շրջանցել այս հարցը եւ ձեռնպահ մնալ Թուրքիայի առջեւ այն դնելուց, բայց ես, իբրեւ հրեա եւ իսրայելցի, ամաչում եմ, որ այժմ Հայոց ցեղասպանության փաստացի հերքման մեջ Դուք գնացիք այնքան հեռու, որ դա նման է Հոլոքոստի ժխտմանը»:

Հրեական ակադեմիական շրջանակների վերաբերմունքը

Վերոնշյալը հստակ ցույց է տալիս, որ Իսրայելում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում միակարծություն գոյություն չունի: Պետական եւ գիտական շրջանակներն իրարամերժ դիրքերում են գտնվում:

Հրեական ակադեմիական շրջանակները գրեթե միաբերան ընդունում են հայերի դեմ իրականացված մեծ ոճիրը: Հոլոքոստի ինստիտուտի տնօրեն եւ «Ցեղասպանության հանրագիտարանի» գլխավոր խմբագիր Իսրայել Չարնին գրում է. «Հայոց ցեղասպանությունը հատկանշական է շատ պարագաներով, այդ թվում նաեւ նրանով, որ XX դարաշրջանում այն զանգվածային ցեղասպանության ամենավաղ օրինակն է, որը շատերը համարում են Հոլոքոստի փորձարկում... Հայերի ցեղասպանությունը մանրակրկիտ կազմակերպված եւ պետության կողմից կառավարվող, կանխամտածված ցեղասպանության վառ օրինակ է»:

Հրեական ծագմամբ ամերիկյան գիտնական Իեգուրա Բաուերը նշում է, որ «հայ ժողովրդի կոտորածը թուրքական Անատոլիայում նման է Հոլոքոստին: Հայ ժողովրդի զանգվածային ոչնչացումն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հոլոքոստի նախակարապետն է: Եթե համեմատենք օսմանյան վարչակարգի կողմից սպանված հայերի թիվը Թուրքիայում ապրող հայերի ընդհանուր թվի հետ, ապա զոհերի թիվը գերազանցում է կամ առնվազն հավասար է Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նահատակված հրեաների համամասնությանը: Հայերի դեպքը Հոլոքոստի ամենամոտ նմանօրինակն է»:

Երուսաղեմի Հրեական համալսարանի դասախոս Մորդեխայ Նիսանը հավաստիացնում է. «Հայերը վերապրել են ցեղասպանություն, տեղահանություն եւ սփռվել [ամբողջ աշխարհում], նրանց պատմական հայրենիքի մեծ մասը մնացել է առանց հայերի եւ հայտնվել թուրքական կառավարման տակ»:

Ամերիկացի մարդաբան Ռիչարդ Ռուբինշթեյնը կարծում է, որ «Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում թուրքական կառավարության կողմից ընդունված գիտակցական որոշումը՝ վերափոխել թուրքական հասարակությունը Թուրքիայի քրիստոնեական հայկական բնակչության համակարգված ոչնչացման միջոցով, կանխորոշում էր եվրոպական հրեաների ոչնչացումը՝ մեթոդներով, չափերով եւ նտահղացմամբ»:

Իսրայելի պաշտոնական շրջանակների դիրքորոշումը

Թեև պաշտոնական Իսրայելն ընդունում է հայերի հետ տեղի ունեցած ողբերգությունը եւ փորձում խուսափել դիրքորոշման արտահայտումից՝ զերծ մնալով ինչպես ցեղասպանություն բառն օգտագործելուց, այնպես էլ երեւոյթը միանշանակ ժխտելուց, սակայն Հայոց ցեղասպանության ճանաչման կողմնակիցներ կան նաեւ իսրայելական իշխանության մեջ: Այսպես, 2000թ. Իսրայելի կրթության նախարար Յոսի Սարիդը, հանդես գալով Իսրայելի հայկական համայնքի առջեւ, հայտարարեց, որ «որպես մարդ, հրեա, իսրայելցի եւ Իսրայել պետության կրթության նախարար» ըմբռնումով եւ կարեկցանքով է վերաբերվում հայ ժողովրդի ազգային ողբերգությանը, որը նա որակեց իբրեւ «ժամանակակից պատմության ամենասարսափելի գործողություններից»՝ հիշատակելով նաեւ ազգությամբ հրեա Հենրի Մորգենթաուին, որն Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպանն էր ցեղասպանության տարիներին: Նա նաեւ խոստացավ անել հնարավոր ամեն ինչ, որ իսրայելցի երեխաները սովորեն եւ իմանան Հայոց ցեղասպանության մասին:

Մեկ այլ իսրայելյան պաշտոնյա՝ արդարադատության նախարար Յոսի Բեյլինը, պատասխանելով Իսրայելում Թուրքիայի դեսպանի հայտարարություններին, ասաց. «Դա պատերազմ չէր: Դա ուղղակի կոտորած էր եւ ցեղասպանություն, մի բան, որ աշխարհը պարտավոր է հիշել»:

Հետագայում, սակայն, կառավարությունում փորձեցին մեղմել այս հայտարարությունները՝ անվանելով երկու նախարարների խոսքերը անձնական կարծիք եւ ոչ թե պետության քաղաքականության արտահայտում:

2005թ. գարնանը, երկկողմանի հարաբերությունների պատմության մեջ ամենախոշոր հայկական պատվիրակության այցելության ժամանակ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն բնորոշեց այն իբրեւ հայերի եւ հրեաների միջեւ հարաբերությունների նոր դարաշրջանի սկիզբ:

Նույն 2005թ. իսրայելական պատվիրակությունը պատասխան այց կատարեց Երեւան, իսկ Իսրայելի գլխավոր ռաբբի Յոնա Մեցգերը, որն այցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, ծառ տնկեց հիշատակի պուրակում:

Էիուդ Օլմերթի կառավարությունն այդ հարցում փորձեց ավելի զգույշ լինել: Այս առումով հետաքրքրական է առողջապահության նախարար Յակով Բեն-Իզրիի 2008թ. սեպտեմբերի հայտարարությունը. «Հրեական ժողովուրդը հատուկ համակրանք եւ հարգանք է տածում հայերի

նկատմամբ, քանի որ նրանք նույնպես կոտորածի են ենթարկվել... Իսրայելի կառավարությունը երբեք չի ժխտել 1915թ. սարսափելի ջարդերը, հասկանում է եւ կիսում հայ ժողովրդի զգացմունքները՝ հաշվի առնելով գոհերի թիվը եւ ահավոր կորուստները»:

Վերջին տարիներին իսրայելական խորհրդարանում՝ Կնեսետում նույնպես ավելացել է այն պատգամավորների թիվը, որոնք կարծում են, թե ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում Իսրայելը պետք է լինի Վաշինգտոնի օրինակին հետեւող առաջին պետությունը:

2008թ. մարտի 26-ին Կնեսետում առաջին անգամ բարձրացվեց Հայոց ցեղասպանության հարցը: Պատգամավոր Խաիմ Օրոնը (Մերեց կուսակցություն) առաջարկեց քննարկել Հայոց ցեղասպանության ճանաչման հնարավորությունը: Հիշեցնելով, որ վերջին տարիներին ԱՄՆ Կոնգրեսը եւ Ֆրանսիայի խորհրդարանը ընդունել են բանաձեւեր Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, նա նշեց, որ այս պայմաններում «անհնար է, որ հրեա ազգը չխոսի դրա մասին»: Կառավարությունը ներկայացնող Շալոմ Սիմհոնը (Ավոդա կուսակցություն), մերժելով տվյալ հարցի քննարկումը լիազուրկ նիստին դնելու գաղափարը, պաշտպանեց իշխող Քադիմա կուսակցությունը ներկայացնող, հայ-իսրայելական խորհրդարանական ընկերակցության նախագահ Ջեեւ Էլկինի նախաձեռնությունը՝ հարցը տեղափոխել կրթության հանձնաժողով: Հատկանշական է, որ նիստին ներկա գտնվող եւ հարցին կողմ քվեարկած պատգամավորները պատկանում էին ինչպես ընդդիմադիր, այնպես էլ իշխանական կուսակցություններին:

Սակայն հարցի քննարկում այդպես էլ տեղի չունեցավ, իսկ Ջեեւ Էլկինը խոստացավ, որ այս հարցը եւս մեկ անգամ բարձրացնելու է 2009թ. խորհրդարանի արդեն նոր կազմի առջեւ:

Հայոց ցեղասպանությունը եւ Թուրքիա–Իսրայել ռազմավարական դաշինքը

Հայոց ցեղասպանության չճանաչման առաջին պատճառներից է Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ գոյություն ունեցող սերտ ռազմավարական դաշինքը, որը ձեւավորվել է դեռ հրեական պետության ստեղծման առաջին օրերից: 1949թ. Թուրքական հանրապետությունը դարձավ Իսրայելը ճանաչած առաջին մուսուլմանական պետությունը: Թել Ավիվի համար այն հսկայական նշանակություն ունեցավ, քանի որ սրանով որոշակիորեն ճեղքվում էր տարածաշրջանային շրջափակումը եւ երկիրը

ծեռք էր բերում Մերձավոր Արեւելքում կարելու մի դաշնակից: Թուրքիան դառնում էր տարածաշրջանային այն եզակի երկրներից, որը ճանաչել էր Իսրայելի գոյության իրավունքը:

Հարաբերությունների շարունակականությունը պահպանելու համար Իսրայելը պատրաստ էր գնալ ցանկացած զիջման, այդ թվում եւ Հայոց ցեղասպանության ճանաչման հրաժարման: Ըստ «The California Courier»-ի գլխավոր խմբագիր Հարութ Սասունյանի, «Իսրայելի առաջնորդները պատրաստ են զոհել պատմական ճշմարտությունը հանուն Թուրքիայի հետ ռազմավարական կապերի»:

Օրինակ, 1990-ականների վերջերին Իսրայելի իշխանությունները ստիպեցին հանել դպրոցական դասագրքերից Հայոց ցեղասպանության մասին նյութը: 2003թ. հայկական ծագմամբ մի իսրայելցի դայակ ընտրվել էր Անկախության օրվա միջոցառումների մաս կազմող լապտերի վառման ավանդական արարողության տասներկու մասնակիցներից մեկը: Այն տեքստը, որ նա գրել էր կառավարության կողմից պատրաստված գրքույկում, նկարագրում էր իրեն իբրեւ «1915թ. հայկական Հոլոքոստի վերապրողների երրորդ սերնդի ներկայացուցիչ»: Սակայն թուրքական դեսպանատան բողոքների հետեւանքով 2000 տպաքանակով նոր գրքույկներ վերահրատարակվեցին՝ այս անգամ այն գրությամբ, որ նա բազմաչափաբար հայ ժողովրդի դուստր է եւ նրա նախնիները վերապրողներ են պատմական Հայաստանից»:

Թուրք-իսրայելական համագործակցությունը հստակ կերպով առնչվում է նաեւ ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ տարվող աշխատանքի հետ: Հրեական լոբբիստական կազմակերպությունները տարիներ շարունակ հանդես են եկել ԱՄՆ-ում այդ հարցի շուրջ առաջադրվող բանաձեւերի, ինչպես նաեւ այլ հարակից հարցերի դեմ՝ անզիջում պայքար մղելով հայկական համանման կազմակերպությունների հետ: Օրինակ, հրեական լոբբին ակտիվ կերպով դիմադրեց ԱՄՆ Կոնգրեսի այն ուղղմանը, որն արգելելու էր Թուրքիային օգտագործել Վաշինգտոնից ստացած միջոցները Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար (օրինակ, դպրոցական այնպիսի դասագրքերի տպագրում, որը չի հիշատակում Առաջին աշխարհամարտի ողբերգական դեպքերը): Ամերիկա-հրեական կազմակերպությունը եւ անձամբ ԱՄՆ արտգործնախարարը զգալի ջանքեր գործադրեցին 2000թ. Կոնգրեսում Հայոց ցեղասպանության մասին բանաձեւի տապալման ուղղությամբ:

Նույն ջանասիրությամբ Շիմոն Պերեսը աշխատեց հրեական լոբբիստական ընկերությունների հետ, երբ 2007թ. ամռանը Էրդողանի խնդրանքով համոզում էր Ընդդեմ խտրականության լիգային (ADL) չճանաչել

Հայոց ցեղասպանությունը, կամ երբ 2007թ. հոկտեմբերին հորդորում էր հրեական խմբերին աշխատել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ընդունված 106 բանաձևը ձախողելու ուղղությամբ:

Հոլոքոստի եզակիության դրույթը

Սակայն կա եւս մեկ պատճառ, որը ոչ մի կապ չունի աշխարհաքաղաքական զարգացումների եւ պետությունների բարեկամական հարաբերությունների հետ: Եթե շատ պետությունների պարագայում Հայոց ցեղասպանության վերաբերյալ դիրքորոշումը պայմանավորված է Թուրքիայի հետ հարաբերությունների որակով, ապա Իսրայելի դեպքում խնդիրը նաեւ այլ հարթության վրա է:

Այստեղ առկա է մի հոգեբանական նրբություն: Հայերի հետ կատարվածը ցեղասպանություն անվանելով՝ երեւոյթն ավելի է նույնացվում հրեական ողջակիզման հետ, ինչն իսրայելական հասարակությանը շատ դժվարությամբ է տրվելու, քանի որ հրեաների գիտակցության մեջ ամուր նստած է այն թեզը, որ «հրեական Հոլոքոստը եզակի, ունիկալ երեւոյթ է»: Ի դեպ, Հոլոքոստի եզակիությունը մշոռ ձայները պատճառաբանում են այն հետեւյալ դրույթով, որ հայերի կողմից իսլամի ընդունումը թույլ էր տալիս խուսափել մահից, քանի որ դարասկզբին թուրքերը ոչնչացնում էին հայերին միայն այն պատճառով, որ համարում էին քրիստոնյաներին «անհուսալի» եւ ռուսամետ: Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հրեաները փրկվելու ոչ մի հնարավորություն չունեին՝ դավանափոխության կամ մի այլ ճանապարհով: Իրականում, սակայն, այս դրույթը միայն հաստատում է Հայոց ցեղասպանության փաստը, քանի որ ըստ Ցեղասպանության կանխման եւ պատժի մասին ՄԱԿ կոնվենցիայի՝ «մարդկանց խմբից բռնությամբ մեկ այլ խումբ տեղափոխելը» նույնպես ցեղասպանության իրականացման հատկանիշ է:

2002թ. փետրվարի 8-ին Վրաստանում եւ Հայաստանում Իսրայելի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռիվկա Քոհենը հայտարարեց, որ «Հոլոքոստը աննախադեպ երեւոյթ է եւ ոչինչ, այդ թվում նաեւ հայերի ողբերգությունը, չի կարելի համեմատել հրեաների ցեղասպանության հետ»: Սա, բնականաբար, առաջացրեց պաշտոնական Երեւանի վրդովմունքը, եւ Հայաստանի ԱԳՆ-ն իսրայելական դեսպանի հայտարարության վերաբերյալ իր բողոքի նոտայում ընդգծեց, որ «Հայաստանը անընդունելի է համարում Հայոց ցեղասպանության հերքման կամ նվազեցման

ցանկացած փորձ, ինչ պատճառաբանությամբ էլ այն արվի: Ավելին, Հայաստանը երբեք նպատակ չի ունեցել զուգահեռներ անցկացնել Հայոց ցեղասպանության եւ հրեական Յոլոքոստի միջեւ, համարելով, որ մարդկության դեմ կատարված ցանկացած հանցագործություն աննախադեպ է իր քաղաքական, իրավական, պատմական եւ բարոյական հետեւանքներով»:

Իսրայելական ղեկավարությունը ստիպված էր հայտարարել, որ Իսրայելը ընդունում է հայ ժողովրդի ողբերգությունը, սակայն նորից շեշտում էր, որ պետք չէ այն նույնացնել ցեղասպանության հետ, ինչը, սակայն, չի նվազեցնում ողբերգության նշանակությունը: Հայտարարությունում նաեւ նշվում էր, որ երկու կողմում էնոցիաների առկայությունը հասկանալի է (sic!), եւ որ լայն հետազոտության եւ վկայությունների ու ապացույցների վրա հիմնված գիտական երկխոսության կարիք կա:

Այս խայտառակ հայտարարությունից հետո ցեղասպանագետ Յաիր Օրոնը պատասխան տպագրեց «Հաարեց» թերթում. «Մենք չենք կարող չնկատել այդ սարսափելի հայտարարության պատմական նշանակությունը: Չկա հիշատակություն մարդասպանի մասին... սակայն սրա հետ մեկտեղ հիշատակվում է երկու կողմերի համար, թուրքերի եւ հայերի, էնոցիաների տեղին լինելու փաստը (պատկերացրեք, եթե հրեաները եւ գերմանացիները միասին հիշատակվեին Յոլոքոստի դեպքում) եւ, իհարկե, հիշատակվում է Յոլոքոստի եզակիությունը: Այս վտանգավոր պաշտոնական հայտարարությունում կա շատ ցինիզմ, մեծամտություն, ներքին հակասություն եւ անպատասխանատվություն: Նրանում Իսրայելը անցնում է պասիվ ժխտողականությունից ակտիվի: Այն հարցականի տակ է դնում ցեղասպանության պատմության ուսումնասիրության նշանակությունն ու պատեհությունը: Իմ կարծիքով, այն պղծում է Յոլոքոստի զոհերի հիշատակը եւ նրա նշանակությունը: Այն փաստը, որ քաղաքական գործիչները, ՁԼՄ-ն եւ ակադեմիական շրջանակները անհարգալից վերաբերմունք են դրսեւորում այսպիսի նշանակալից դեպքի հանդեպ, միայն ցուցադրում է մեր բարոյական սնանկության խորությունը: Ես, իբրեւ իսրայելցի հրեա, կարող եմ միայն ներողություն հայցել յուրաքանչյուր հայից եւ հավաստիացնել հայ ժողովրդին, որ Իսրայելում կան մարդիկ, որոնք չեն հանգստանա, մինչեւ իրենց պետությունը չվերանայի իր անբարոյական եւ հակապատմական մոտեցումն այն ցեղասպանության հանդեպ, որին ենթարկվել է մեկ այլ ժողովուրդ»:

Չեռանկարներ

Դավոսյան հանդիպումը նոր զարգացումների հույսեր առաջացրեց: Նույնիսկ եղան կարծիքներ, որ Իսրայելը Թուրքիային պատժելու համար միայն կճանաչի Չայոց ցեղասպանությունը: Սակայն դա կարելի էր հավանական համարել, եթե չլիներ Չայոց ցեղասպանության չճանաչման երկրորդ պատճառը՝ Չոլոքոստի եզակիության խնդիրը: Սա ավելի կարեւոր եւ հրեական ինքնության համար չափազանց զգայուն հարց է: Եվ միայն թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացումը, թերեւս, բավարար չէ սա հաղթահարելու համար: (Այս պարագայում հետաքրքրական է, որ Իսրայելի վարչապետի ամենահավանական թեկնածուն՝ Լիքոնդ կուսակցության նախագահ Բենիամին Նաթանյահուն, օրինակ, խոստացել է ճանաչել ուկրաինական Չոլոքոստը):

Ավելի հավանական զարգացում է թվում ԱՄՆ-ում գործող հրեական լոբբիստական կազմակերպությունների դիրքորոշման որոշակի փոփոխությունը: Հրեական կազմակերպությունների կողմից Թուրքիայի դիրքորոշման միանշանակ պաշտպանությունից հրաժարվելու գործընթացն արդեն սկսվել էր դեռ 2007թ.: Թուրքիայի ու Իսրայելի հարաբերությունների վատթարացման դեպքում այս միտումը կարող է նոր թափ հավաքել եւ անշրջելի դառնալ: Այս դեպքում շատ մեծ է հավանականությունը, որ 106 բանաձեւի վերաբացման ժամանակ հրեական լոբբին կդադարի սատարել Անկարային եւ չի խոչընդոտի ԱՄՆ-ի կողմից Չայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին:

**ՍԻՐԻԱՅԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.
ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ
Արաքս Փաշայան**

Հայերը Սիրիայում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից ի վեր: Տարածաշրջանի հետ Հայաստանն ունեցել է պատմամշակութային դարավոր կապեր: Սիրիահայ համայնքը մեծապես համալրվել է 1915թ. Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գաղթականներով, ապա՝ Կիլիկիայից փախստական հայերով: Ներկայումս Սիրիայի հայերի թիվը 65-70 հազարի շրջանակներում է. հայաշատ համայնքներ կան Հալեպում, Կամիշլիում, Դամասկոսում, Լաթաքիայում, Քեսապում: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին Սիրիայում ունի երկու թեմ՝ Բերիո (առաջնորդանիստը՝ Հալեպի Ս.Քառասուն մանկունք եկեղեցի) եւ Դամասկոսի (առաջնորդանիստը՝ Դամասկոսի Ս.Սարգիս եկեղեցի):

Սիրիայի հայերի շրջանում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Դամասկոսի հայ համայնքը, որը հայկական սփյուռքի ավանդական եւ կայացած համայնքներից է: Դամասկոսի հայերի թիվը չի գերազանցում 5-6 հազարը:

Պետության կողմից դամասկոսահայ առաքելական համայնքը (ինչպես նաեւ այլ քրիստոնեական համայնքներ) դիտարկվում է որպես կրոնական փոքրամասնություն, որին պետության առաջ ներկայացնում է էջմիածնին պատկանող Դամասկոսի Հայոց առաքելական թեմը: Փաստորեն, եկեղեցին պետության մոտ իր համայնքի ներկայացուցիչն է, իսկ համայնքի մոտ՝ պետության: Դամասկոսահայ համայնքն ունի տեղական ազգային իշխանություն, որ գործում է դեռեւս 1853թ. կազմված եւ 1863-ին սուլթանական կառավարության կողմից վավերացված ազգային սահմանադրության հիման վրա: Ներկայումս Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդը Տ. Արմաշ եպս. Նալբանդյանն է:

Համայնքի ներքին գործերը վարում է օրենսդիր մարմին հանդիսացող Գավառական ժողովը, որն ընտրում է գործադիր մարմնի նշանակություն ունեցող Քաղաքական ժողով: Սիրիայում ազգային կյանքը կազմակերպելու հարցում հայերը մեծ հնարավորություններ են ստացել: Նրանց իրավունք է տրվել հայերեն լեզու եւ հայերենով՝ քրիստոնեական կրոն դասավանդել:

Սիրիահայերը երկրում լավ համարում եւ ճանաչում ունեն: Սիրիայի պատմության տարբեր փուլերում հայերն աջակցել են արաբներին, այդ թվում՝ անկախության համար մղված պայքարում: XIX դարի երկրորդ կեսին Սիրիայում ազգային-մշակութային եւ ազգային-քաղաքական զարթոնքի (Նահդայի) շրջանում ծագումով հայ գործիչները մեծ դեր են խաղացել: Նրանցից են արաբական պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիրներից մեկը՝ Նահդայական գործիչ Ադիբ Իսհակն (1856–1882) ու արաբական հրապարակախոսության նույնպես հիմնադիր համարվող Ռզկալլահ Չասունը (1823–1880): Մեծ թվով հայեր դարձել են Սիրիայի Արաբական Չանրապետության բանակի սպաներ եւ մասնակցել երկրի պաշտպանությանը, իսկ գեներալ-լեյտենանտ Արամ Կարամանուկյանը, ով համարվում է Սիրիայի բանակի հիմնադիրներից մեկը, մասնակցել է 1948թ. արաբ-իսրայելական պատերազմին:

Այսօր էլ սիրիահայերը, այդ թվում՝ դամասկոսահայերը, ակտիվորեն ներգրավված են Սիրիայի սոցիալ-տնտեսական եւ մշակութային ոլորտներում: Դամասկոսում բավական հայտնի անուն է Սիրիայի սիմֆոնիկ նվագախմբի հայազգի դիրիժոր Միսակ Բաղբուդարյանը: Սիրիայի գրողների միությունն ունի երեք հայ անդամ, որոնցից են Նորա Արիսյանը՝ Դամասկոսից, Ալեքսանդր Քեչիշյանն ու Չրաչ Քալսահակյանը:

Դամասկոսահայերը ներգրավված են հիմնականում արհեստների եւ գործարարության ոլորտում: Ներկայումս զինվորականության մեջ եւ պետական ապարատում հայեր գրեթե չկան: Մտավորականները փոքր մաս են կազմում: Ակադեմիական գիտությանը զբաղվողները եզակի են:

Հատկանշական է, որ Սիրիայում, այդ թվում՝ Դամասկոսում վերջին քսան տարիներին հայ երիտասարդները կրթության նկատմամբ շատ ավելի մեծ հակում են ցուցաբերում, եւ ավելի շատերն են բարձրագույն կրթություն ստանում, քան 1970–1980-ականներին էր, ինչն առավելապես կապված է հայերի նյութական հնարավորությունների բարելավման հետ:

Սիրիայում հայկական կուսակցությունների գործունեությունն արգելված է, այդ իսկ պատճառով Դամասկոսում վերջիններս գործում են սահմանափակ ձեւով՝ հասարակական, մշակութային եւ մարզական կազմակերպությունների կամ միությունների (ակումբների) շրջանակներում: Սիրիահայ համայնքն, ըստ էության, ցանցային կառույց է, քանի որ բոլոր միությունները եւ կրոնադավանական ուղղություններն ունեն իրենց ենթակառույցները կամ մասնաճյուղերը Սիրիայի գրեթե բոլոր հայաշատ շրջաններում: Ակումբներում կազմակերպվում են մշակութային եւ մարզական տարբեր միջոցառումներ: Դամասկոսում առավել հայտնի է Հայ կաթողիկե միության՝ 1960-ականներին հիմնված «Քնար» երգչախումբը,

որի ղեկավարը Շանթ Քեչիշյանն է: Շատ հաճախ Հայաստանից, ինչպես նաև Սփյուռքի տարբեր շրջաններից եւ արտերկրից հրավիրվում են մշակութային եւ հասարակական-քաղաքական գործիչներ:

Դամասկոսում գործող միությունները պաշտոնապես արտոնված են գործում եւ գրանցված են Սիրիայի Սոցիալական եւ աշխատանքի նախարարությունում, ունեն իրենց ներքին կանոնադրությունը եւ հետևում են տվյալ նախարարության հաստատած կարգին: Դամասկոսում գործում են Համազգային հայ կրթական-մշակութային միության, Նոր սերունդ մշակութային միության, Հայ բարեգործական ընդհանուր միության, Թեքեյան մշակութային միության մասնաճյուղերը, նաև՝ Հայ կաթողիկե միությունը: Տարբեր միություններին պատկանելը թեև ի ցույց է դնում համայնքի ներքին բարդ խճանկարը, սակայն հայապահպանմանը չի վնասում:

Դամասկոսահայերը կրոնադավանական տարբեր հանրություններ են՝ որոշակի առանձնահատկություններով. կան առաքելական, կաթողիկե եւ ավետարանական համայնքներ: Թվաքանակի առումով առաքելականներն ամենամեծն են: Հայ կաթողիկեներն ունեն առաջնորդարաններ Դամասկոսում եւ Հալեպում, իսկ հայ ավետարանականները՝ համայնքատուրքում Հալեպում: Դամասկոսի կաթողիկ հայերի առաջնորդը Հովսեփ Եպիսկոպոս Արնաուտյանն է, իսկ Հայ ավետարանական եկեղեցու հովիվը՝ Տաթև Պասմաճյանը: Հայ առաքելական, կաթողիկե եւ ավետարանական եկեղեցիների մեջ կա սերտ համագործակցություն: Վերջիններիս համատեղ ջանքերով են կազմակերպվում մի շարք համահայկական միջոցառումներ (այդ թվում՝ Ապրիլի 24-ը):

Դամասկոսի Հայ կաթողիկե համայնքը փոքրաթիվ է, հիմնականում արաբախոս, ունի առաջնորդարան, եկեղեցի, որը համայնքի կենտրոնն է: Համայնքի ամենահանգուցային դեմքը Սարգիս Քեչիշյանն է, ով մեծ դեր ունի հայ կաթողիկ համայնքի ազգային կյանքը կազմակերպելու հարցում: Ինչ վերաբերում է հայ ավետարանականներին, ապա նրանց համայնքը նույնպես փոքրաթիվ է, սակայն կաթողիկեների համեմատ՝ ավելի հայախոս: Հայ ավետարանականները Դամասկոսում ունեն եկեղեցի եւ դպրոց:

Դամասկոսի հայության մեջ առանձին շերտ են կազմում արաբախոս (հիմնականում՝ կաթողիկ) *հին հայերը* (արման կադիմ): Նրանց շրջանում ազգային գիտակցությունը գրեթե մթազնած է:

Դամասկոսահայ համայնքը համախմբելու հարցում դրական դեր է խաղում Սիրիայում ՀՀ դեսպանությունը, որն իր միջոցառումներին հրավիրում է հայկական բոլոր միությունների, այդ թվում՝ կաթողիկ եւ ավետարանական համայնքների ներկայացուցիչներին:

Վերջին տարիներին, կապված ժողովրդագրական գործոնի հետ, Սիրիայի խորհրդարանում կա միայն մեկ հայ պատգամավոր: Հայ թեկնածուն Հալեպի (Բերիո) Հայոց թեմի առաջնորդարանի թեկնածուն է համարվում, ընտրվում է համամասնական ցուցակով: Վերջին խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել 2007թ. ապրիլին: Սիրիայի Ազգային ժողովի ներկայիս հայ պատգամավորը Հալեպից իրավաբան Ս.Սունբուլյանն է, ով երկրորդ անգամ է դարձել խորհրդարանի պատգամավոր: Վերջինս խորհրդարանի արտաքին կապերի հանձնաժողովի անդամ է եւ հայ-սիրիական բարեկամության պառլամենտական հանձնաժողովի նախագահը: Դամասկոսի հայերը քաղաքականությամբ հիմնականում չեն զբաղվում, չնայած հայերի մեջ կան իշխող «Բաաս» կուսակցության անդամներ:

Դամասկոսի հայ համայնքի ամենահանգուցային խնդիրներից մեկը թեմական հարցն է¹, որը որոշ իմաստով տարանջատել է համայնքը՝ բաժանելով այն երկու թելի: Առաջինի մեջ էջմիածնական կողմնորոշում ունեցողներն են՝ հնչակյան, բարեգործական, ռամկավար եւ կոմունիստ շրջանակները, մյուս թելում՝ դաշնակցական, որոնք անթիլիասական կողմնորոշում ունեն եւ ձգտում են Դամասկոսի թեմը վերադարձնել Կիլիկիո աթոռին՝ Անթիլիասին, իսկ Դամասկոսի թեմի՝ էջմիածնին պատկանելը համարում են անօրինական: Նրանք բոյկոտում են այն միջոցառումները, որոնք կազմակերպվում են Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդի հովանավորությամբ: Թեմական հարցը վերաճել է գործնականում չհանգուցալուծվող խնդրի, որը շատ դեպքերում ջլատում է համայնքի ուժերը: Շատերի կարծիքով՝ թեմական խնդիրը ակտիվություն է մտցնում համայնքում, սակայն այդ երեւութական աշխուժությունը, ըստ էության, անառողջ մրցակցության արդյունք է, իսկ նոր սերունդը շատ դեպքերում այլեւս հոգնել է հին վեճերից:

¹ Դամասկոսի թեմը կազմավորվել է XV դարի կեսին՝ Երուսաղեմի հայոց պատրիարքության կողմից եւ գործել նրա ենթակայության ներքո մինչեւ 1929թ.: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության վերակազմավորման համար (Մեծ եղեռնից եւ 1921-ին Կիլիկիայի հայաթափումից հետո նրա ենթակայության տակ էր մնացել միայն Հալեպի թեմը) 1929-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցի օրհնությամբ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը Բեյրութի եւ Կիպրոսի թեմերի հետ Կիլիկիո աթոռին է փոխանցել նաեւ Դամասկոսի թեմը: 1956-ի եկեղեցական տագնապից հետո թեմի վարչական պատկանելության հարցը դեռեւս հստակեցված չէ: Դամասկոսի թեմի առաջնորդը ներկայումս ներքին կարգով նշանակվում է էջմիածնից:

Դամասկոսահայերը, ինտեգրված լինելով սիրիական հասարակությանը, միաժամանակ ձգտում են պահպանել իրենց ազգային դիմագիծը: Համայնքում գործում են հայ առաքելական համայնքին պատկանող ազգային դպրոցներ (որոնց շրջանակներում գործում են նաեւ մանկապարտեզներ): Դամասկոսում հայտնի են հետեւյալ դպրոցները՝ Ազգային Թարգմանչաց վարժարանը, որը Դամասկոսում հիմնված (1898թ.) առաջին կրթական հաստատությունն է, Ազգային միացյալ վարժարանը (1929թ.), Կյուլապի Կյուլպենկյան-Սահակյան վարժարանը (1929թ.): Եվս երեք դպրոց ունեն հայ կաթոլիկները եւ մեկ դպրոց՝ հայ ավետարանականները: Դպրոցն ավարտելուց հետո հայ աշակերտներն ուսումը շարունակում են արաբական կամ մասնավոր (վճարովի) դպրոցներում: Ազգային միացյալ վարժարանը ներկայում ունի 170 հայ աշակերտ: Դպրոցն առաջիկայում կգործի առավել արդիական շենքում, որը գտնվում է քաղաքի արվարձաններից մեկում: Կյուլապի Կյուլպենկյան-Սահակյան վարժարանն ունի 160 աշակերտ, իսկ Թարգմանչացը՝ 350: Հայ կաթոլիկների եւ ավետարանականների դպրոցներում հայ աշակերտների թիվը շատ սակավ է:

Ազգային դաստիարակությունը շարունակվում է ինչպես մշակութային եւ մարզական միություններում, այնպես էլ ընտանիքում: Դամասկոսահայության մի հատվածի տեսակետի համաձայն՝ հայկական դաստիարակությունն ամենաուժեղ ձեւով դրսեւորվում է դաշնակցական շրջանակներում:

Հայկական թերթեր Դամասկոսում չեն հրատարակվում, սակայն ստացվում են Բեյրութից: Առավել մեծ տարածում ունեն «Ազդակ» եւ «Զարթօնք» թերթերը: Դամասկոս են հասնում նաեւ Հալեպի (Բերիո) Հայոց թեմի շաբաթաթերթ «Գանձասարը» եւ այլ հրատարակություններ: Չնայած Դամասկոսում կան հայերին պատկանող տպարաններ, սակայն դրանցում հայկական գրականություն գրեթե չի հրատարակվում:

Դամասկոսահայ համայնքում գործում են նաեւ բարեգործական հաստատություններ, որոնցից են Ս.Սարգիս եկեղեցու աղքատախնամ հանձնախումբը, որ հիմնվել է 1890-ականներին, նաեւ՝ Սիրիահայ օգնության խաչը, որը կանանց բարեգործական կազմակերպություն է, հիմնվել է 1929-ին՝ Հայ հեղափոխական դաշնակցության նախաձեռնությամբ:

Սիրիահայերի նկատմամբ թե՛ իշխանությունները, թե՛ հասարակությունը բարյացակամորեն են տրամադրված: Այս հանգամանքը պայմանավորված է հայերի վաստակով՝ նրանց վստահելի եւ օրինապահ վարքագծով (Դամասկոսի համալսարանի դասախոս Նորա Արիսյանի կարծիքով՝ սիրիահայերն առանձին դեպքերում իրենց պարտականու-

թյուններն ավելի լավ գիտեն, քան իրենց իրավունքները), նաեւ՝ էթնոդավանական փոքրամասնությունների հարցում ներկա վարչակազմի հանդուրժողական քաղաքականությամբ: Ներկայումս Սիրիայում խաղաղ գոյակցում են էթնոդավանական եւ կրոնադավանական բազմաթիվ ուղղությունների ներկայացուցիչներ: Առանձին մզկիթներ ու եկեղեցիներ տեղակայված են կողք կողքի: Հայ հոգեւորականները ժամանակ առ ժամանակ հանդիպում են Սիրիայի ոչ միայն իսլամ, այլեւ քրիստոնեական եւ կրոնական այլ ուղղությունների գործիչների հետ, քննարկվում են համագործակցության, միջկրոնական ու միջդավանական երկխոսության, ինչպես նաեւ կրոնական եւ էթնիկ հանդուրժողականությանն առնչվող հարցեր:

Չնայած այդ իրողությանը՝ կա անվտանգությանն առնչվող ներքին տագնապ: Իրաքում միջէթնիկ եւ միջդավանական հակասությունները որոշակի մտավախություն են ստեղծել՝ որպես հնարավոր նախադեպ մմանօրինակ խնդիրների առաջացման պարագայում: Հարեւան պետություններում տեղի ունեցող գործընթացները Սիրիայի վրա ազդում են նաեւ տնտեսապես: Պատահական չէ, որ վերջին շրջանում հայերի մեջ թափ առնող արտագաղթը (որը նոր երեւույթ չէ) նաեւ տնտեսական շարժառիթներ ունի: Հիմնականում արտագաղթում են ԱՄՆ, Կանադա, Եվրոպա, Ծոցի երկրներ: Արտագաղթողների մի մասը երիտասարդներ են, որոնք ուսանելու են գնում (հիմնականում՝ Ամերիկա եւ Եվրոպա) եւ այլեւս չեն վերադառնում:

Դամասկոսահայությունը ներկայումս բախվել է բազմաթիվ խնդիրների, որոնք, փաստորեն, մի կողմից կապված են ազգապահպանման, մյուս կողմից՝ տնտեսական խնդիրների հետ: Ազգապահպանությանն ուղղված ջանքերը գնալով դժվարանում են. մեծանում է օտար մշակույթների ազդեցությունը, կան արաբախոս շատ ընտանիքներ, որոնց մեջ հայկական շրջանակում մնալու զգացողությունն աստիճանաբար նվազում է, որոշակիորեն շատանում են նաեւ խառնամուսնությունները (հիմնականում՝ քրիստոնյա արաբների հետ): Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանի խոսքերով՝ կա մի խավ, որն ազգային իմաստով «ծուլլ» է եւ իրեն հեռու է պահում ամեն ինչից:

Սիրիահայերը, այդ թվում՝ դամասկոսահայերը, ազգային կյանքի աշխուժացման հարցում որոշակի ակնկալիքներ ունեն Հայաստանից: Նրանք ցանկանում են, որպեսզի Հայաստանը տեր կանգնի համահայկական խնդիրներին ու Սփյուռքին: Հայաստանում կան իրողություններ, որոնք բացասաբար են ընկալվում նրանց շրջանում: Դամասկոսահայերին

առաջին հերթին մտահոգում է Հայաստանում մի շարք արատավոր երեւոյթների, ինչպես, օրինակ, աղանդների տարածումը: Տարբեր առիթներով Հայաստանում բախվելով վարչական եւ սոցիալական խնդիրների՝ դամասկոսահայերից (կամ սիրիահայերից) շատերը Հայաստանը համարում են դեռեւս կայացման գործընթացում գտնվող երկիր: Առանձին տեսակետների համաձայն՝ ՀՀ-ն իրենց երազած Հայրենիքը չէ: Այս հանգամանքը շատ դեպքերում կարող է հանգեցնել ազգային գիտակցութեան ճգնաժամի:

Դամասկոսահայ համայնքում ազգային կյանքն աշխուժացնելու տեսանկյունից շատ կարեւոր դեր է կատարում արբանյակային կապը, որը հնարավորութիւն է տալիս դիտել ՀՀ-ը:

Չնայած դամասկոսահայ համայնքը տիրապետում է ինքնակազմակերպման արդյունավետ, ավանդական մեխանիզմների եւ ունի զգալի ներուժ, սակայն կարիք ունի արդիականացնելու ազգային կազմակերպման ավանդական գործառնութեանը:

**ԹՈՒՐՔԻԱ. ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔԱՏԸ
Սարգիս Հարությունյան**

Վերջին շրջանում շատ է խոսվում Թուրքիայի՝ միջազգային նշանակության էներգետիկ հանգույց դառնալու հեռանկարի մասին: Օրինակ, 2008թ. այդ երկրի արտաքին գործերի նախարարության ներկայացրած մի հաշվարկի համաձայն, եթե նավթի միջազգային փոխադրման գործում Թուրքիայում առկա հզորությունները (առաջին հերթին՝ նավթամուղները) շարունակեն գործել առկա ծավալներով եւ շարք մտնեն արդեն նախագծվածները, ապա 2012թ. Թուրքիայով կանցնի աշխարհի նավթային հոսքերի 6-7%-ը: Նույն հաստատության կողմից ներկայացված մեկ այլ ուշագրավ տվյալի համաձայն, Թուրքիան գտնվում է աշխարհի նավթի ապացուցված պաշարների 72.7%-ի եւ բնական գազի ապացուցված պաշարների 71.8%-ի գրեթե անմիջական հարեւանությամբ:

Հաշվի առնելով Թուրքիայի աշխարհագրական հայտնի առավելությունները՝ պարզ է դառնում, որ այդ երկիրը չի կարող լուրջ ֆինանսական նպատակներ չունենալ էներգակիրների փոխադրման բիզնեսում: Բայց մյուս կողմից, վերջին շրջանում նկատվող էական փոփոխությունները Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ՝ ընդհանրապես եւ տարածաշրջանային մոտեցումներում՝ մասնավորապես, հիմք են տալիս եզրակացնելու, որ Անկարայի էներգետիկ ռազմավարության նպատակներն ածանցյալ են թուրքական արտաքին քաղաքականությունից եւ առաջին հերթին պետք է դիտարկվեն այդ համատեքստում:

Իրավիճակային վերլուծություն

Արդեն այսօր գոյություն ունեն մի քանի գործոններ, որոնք խոսում են միջազգային էներգետիկ համակարգում Թուրքիայի՝ որպես միջնորդ պետության, դերի առաջիկա բարձրացման մասին:

Հատկապես վրաց-ռուսական պատերազմից եւ ռուս-ուկրաինական վերջին գազային հակամարտությունից հետո եվրոպական երկրները սկսեցին շատ ավելի լուրջ վերաբերվել Թուրքիայի տարածքով մերձավորարեւելյան, կասպյան եւ կենտրոնաասիական էներգակիրները ստանալու գաղափարին: Օրինակ, բնական գազի հարցում Ռուսաստանից

բացի, Եվրոպայում համարում են, որ, խոշոր հաշվով, ունեն երեք այլընտրանք՝ Նորվեգիա, Ալժիր եւ Թուրքիա¹, սակայն արդեն այսօր պարզ է, որ առաջին երկուսը ուղղակի չեն կարող ապահովել կապույտ վառելիքի այն ծավալները, որոնք կարող են էապես կրճատել կախվածությունը «Газпром»-ից²: Մինչդեռ, թուրքական ուղղությամբ ելք է բացվում մի հատված, ուր կենտրոնացած է բնական գազի աշխարհի ապացուցված պաշարների գրեթե կեսը³: Անշուշտ, նախկինում նույնպես Եվրոպայի համար թուրքական ուղղությունն արդիական էր, սակայն նորությունն այն է, որ այսօր հարցի առնչությամբ ընթանում է ժամկետների վերանայման՝ արագացման գործընթաց, որի ցուցիչները մենք դեռ կտեսնենք:

Երկրորդ կարևոր գործոնը ամերիկա-իրանական ու Եվրոպա-իրանական ընթացող բանակցություններն են, ինչպես նաև 2011թ. նախատեսված ԱՄՆ իրաքյան կամպանիայի ավարտը: Նշված երկու գործընթացների հաջող ավարտի պարագայում արեւմտյան սպառողների համար կարող են լիարժեքորեն բացվել էներգակիրներով հարուստ երկու երկրներ՝ Իրանն ու Իրաքը, որոնք միասին տիրապետում են նավթի աշխարհի ապացուցված պաշարների 20.5% եւ բնական գազի՝ 17.5%-ին: Սակայն Եվրոպայի եւ Միացյալ Նահանգների համար Թուրքիան, փաստորեն, միակ հարմար տարբերակն է, որի միջոցով կարելի է նշված նավթն ու գազը հասցնել Եվրամիություն՝ կրճատելով վերջինիս էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից: Ներկայում ընթացող ամերիկա-իրանական պայմանավորվածության պատճառներից մեկն էլ պետք է դիտարկել հենց էներգետիկ ոլորտում ռազմավարական փոխհամաձայնության հասնելու նպատակը: Էներգետիկ ոլորտը, թերեւս, այն միակ բնագավառն է, որն այսօր Իրանի, ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջեւ կարող է լուրջ պայմանավորվածության հնարավորություն ստեղծել:

Եվ վերջապես, երրորդ գործոնը Ղազախստանի ու հատկապես Թուրքմենստանի նպատակն է դուրս գալ արեւմտյան շուկաներ: Թեեւ մինչ օրս Ռուսաստանը բավական հաջող կերպով իր վերահսկողությունը պահպանել է կենտրոնաասիական երկրների էներգետիկ կարողությունների նկատմամբ, սակայն չպետք է բացառել այն տարբերակը, որ Իրանի «բացվելը» կարող է ԱՄՆ-ի ու Եվրոպայի համար մուտքի հնարավորություն ապահովել դեպի Կենտրոնական Ասիայի էներգետիկ պաշարներ:

Ինչպես նշվեց, միջազգային նշանակության էներգետիկ հանգույց դառնալը Թուրքիայի համար չի սահմանափակվում զուտ էներգետիկ կամ ֆինանսատնտեսական նպատակներով: Հատկանշական է, որ 2009թ. հունվարին Բրյուսելում, Եվրամիության պատասխանատուների հետ Միությանը Թուրքիայի հնարավոր անդամակցության հարցի շուրջ բա-

նակցություններ վարելիս՝ վարչապետ Էրդողանը իրար կապեց Թուրքիայի տարածքում կառուցվելիք «Nabucco» գազամուղի արդյունավետության եւ ԵՄ-ին Անկարայի անդամակցության հարցերը:

Իհարկե, «Nabucco»-ի խնդիրը դժվար թե էական ներգործություն ունենա Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հեռանկարի վրա, սակայն քիչ հավանական է, որ նման հույսեր են կապում նաեւ Անկարայում: Էրդողանի նման քայլը ավելի շատ ի ցույց է դնում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ ձեւավորվող մոտեցումները՝ էներգակիր ստացող երկրների, իսկ հետագայում նաեւ էներգակիրներ վաճառող երկրների հետ հարաբերվելիս՝ օգտագործել միջնորդ պետության ընձեռած հնարավորությունները:

Եթե փորձենք հակիրճ ձեւակերպել ի հայտ եկող նորությունը, ապա Անկարայում նպատակ է դրված Թուրքիայի գեոստրատեգիական դիրքի եւ ռազմաքաղաքական կարողությունների մակարդակին հասցնել էներգետիկ հանգուցային երկրի ընձեռած հնարավորությունները, ինչը միայն կբարձրացնի այդ պետության կշիռը տարածաշրջանային եւ գլոբալ հարաբերություններում⁴:

Ներկայացվածի ապացույց կարող է ծառայել այն հանգամանքը, որ ներկայում Թուրքիան էներգետիկ (առաջին հերթին՝ նավթագազային) բավական ակտիվ համագործակցություն է ծավալում իր բոլոր հարեւանների հետ՝ Վրաստան, Իրան, Իրաք, Սիրիա, Յունաստան, Ռուսաստան, Իսրայել, Բալկանյան երկրներ: Պատահական չէ, որ հայթորքական հարաբերություններում սկիզբ առած նորմալացման գործընթացը նույնպես համընկավ էներգետիկ ոլորտում (էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի մասին պայմանավորվածությունը) ձեռք բերված համաձայնությանը:

Չետեություններ

Միջազգային նշանակության էներգետիկ հանգույց դառնալու Թուրքիայի ռազմավարությունն առնվազն հետապնդում է երկու նպատակ:

Առաջին՝ ներկայում ընթացող միջազգային քաղաքական-տնտեսական համակարգի ձեւափոխման գործընթացում ապահովել Անկարայի պատշաճ ներկայությունը որոշումների կայացման գլոբալ մեխանիզմում: Նախկինում դա արվում էր մի մեծ մասով ՆԱՏՕ անդամության եւ Մերձավոր Արեւելքում ու իսլամական աշխարհում ԱՄՆ կարեւորագույն դաշնակիցը լինելու միջոցով: Սակայն նոր պայմաններում, երբ ՆԱՏՕ թուլացումն ու ամերիկա-թուրքական հարաբերությունների վատացումը

կարող են հանգեցնել միջազգային համակարգում թուրքիայի ազդեցության կրճատմանը, Անկարայի պատկերացմամբ՝ էներգետիկ հանգույցերի ընձեռած հնարավորությունները կոչված են փոխհատուցելու այդ կորուստները:

Մյուս կողմից, թուրքիայի էներգետիկ ռազմավարությունը պետք է դիտարկել այդ երկրի տարածաշրջանային քաղաքականությունում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում: Եթե թուրքիայի Հանրապետության հիմնադրումից ի վեր Անկարան Արեւմտյան աշխարհի հենակետն էր Մերձավոր Արեւելքում, ապա այսօր թուրքիայում փորձում են վերստին ստանձնել Օսմանյան կայսրության առանցքային դերակատարությունը Մերձավոր Արեւելքում, եւ Անկարայի էներգետիկ հանգույց դառնալը կոչված է մեծացնելու թուրքիայի ազդեցությունը տարածաշրջանում: Այդ տեսանկյունից շատ ավելի բնութագրական է Անկարայի որոշումը՝ հարաբերությունների նորմալացման գործընթաց սկսել Երեւանի հետ, քան Երդողանի կառավարության աննախադեպ սուր մոտեցումը Գազայում Իսրայելի գործողությունների նկատմամբ:

Հեռանկարի իմաստով էական է այն հարցը, թե անվտանգության ինչ համակարգ է առաջարկելու թուրքիան փոփոխվող տարածաշրջանին (Մերձավոր Արեւելք, Հարավային Կովկաս, Բալկաններ): Ակնհայտ է, որ տարածաշրջանի էներգետիկ պատկերի ձեւափոխությունը (իսկ այդպիսին է նաեւ թուրքիայի՝ էներգետիկ հանգույցի վերածվելը) չի կարող տեղաշարժեր չառաջացնել տարածաշրջանային անվտանգության համակարգում: Միգուցե Անկարայի նախաձեռնած «Կովկասյան կայունության եւ համագործակցության պլատֆորմը» թուրքիայի ենթադրվող առաջարկության մի մասն է, սակայն գրեթե կասկածից վեր է, որ Անկարայի հիմնական նախաձեռնությունները դեռ առջեւում են: Շատ բան կախված է Իրաքում, Սիրիա – Իսրայել ուղղությամբ, Ռուսաստանի, Իրանի ու Հայաստանի հետ հարաբերություններում եւ ընդհանրապես՝ Հարավային Կովկասում ընթացող զարգացումների ելքից:

Մեր երկրի պարագայում էական է այն հանգամանքը, որ թուրքիայի «փոխվելը» եւ Մերձավոր Արեւելքում նոր իրավիճակի ի հայտ գալը կարող են այդ տարածաշրջանը «բացել» մեզ համար՝ մեծացնելով Երեւանի ներգրավվածությունն այս ուղղությամբ: Դա նշանակում է, որ առաջիկայում մեր երկրի ազգային անվտանգության համակարգի վրա մերձավորարեւելյան զարգացումները կարող են ունենալ ավելի լուրջ ներգործություն:

¹ Առկա է նաև Լիբիայի տարբերակը, սակայն արեւմտյան ընկերությունների առջեւ այդ երկրի նոր «բացվելու» պատճառով լիբիական ուղղությունն ավելի շատ համարվում է հեռանկարային:

² Ներկայում «Газпром»-ն ապահովում է Եվրամիության բնական գազի ներմուծման մոտ 40%-ը՝ 140 մլրդ մ³:

³ «BP Statistical Review of World Energy, June 2008»-ի համաձայն, Պարսից ծոցի ութ երկրները (Իրան, Իրաք, Քուվեյթ, Սաուդյան Արաբիա, Բահրեյն, Կատար, Արաբական Միացյալ Էմիրություններ, Օման) եւ Կասպիցին հարակից չորս պետությունները (Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան, Ուզբեկստան) միասին տիրապետում են բնական գազի աշխարհի ապացուցված պաշարների 45.05%-ին:

⁴ Չնայած ներկայում Թուրքիան ներքին կարողությունների հաշվին բավարարում է իր էներգետիկ պահանջների ընդամենը 30%-ը:

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ

Սեւակ Սարուխանյան

2009թ. տարեսկիզբը նշանավորվեց քաղաքական, ռազմական եւ տնտեսական բնույթի զարգացումներով, որոնք կարող են հանգեցնել իրավիճակի որոշակի փոփոխության Կենտրոնական եւ Առաջավոր Ասիայում: Դրանցից ամենակարեւորները, թերեւս, պետք է համարել «Նաբուկո» նախագծի իրականացման ակտիվացումը, թուրք-իրանական էներգետիկ համագործակցության նոր որակի նշմարումը եւ ամերիկյան ռազմականայանը Ղրղըզստանից դուրս բերելու՝ դրոզական իշխանությունների որոշումը:

«Նաբուկոն» եւ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին

2009թ. տարեսկզբին ռուս-ուկրաինական հարաբերություններում տեղ գտած գազային ճգնաժամից առավել չափով տուժած երկրներից մեկը Թուրքիան էր: Թեեւ «Երկնագույն հոսք» գազամուղն անմիջականորեն միմյանց է կապում Ռուսաստանի եւ Թուրքիայի գազատար համակարգերն ու հնարավորություն ստեղծում ռուսական գազը Սեւ ծովի հատակով Թուրքիա ուղիղ արտահանելու համար, սակայն Թուրքիայի արեւմտյան նահանգներն իրենց գազի պահանջարկն ապահովում են ռուսական բնական գազով, որը երկիր է մտնում Բուլղարիայի տարածքով: Ռուսական գազի մատակարարման դադարեցումը ուկրաինական երթուղով հանգեցրեց նրան, որ Թուրքիայի արեւմտյան շրջանները զրկվեցին ռուսական երկնագույն վառելիքից:

Թեեւ ռուսական «Գազպրոմը», Թուրքական ազգային նավթային կորպորացիան եւ «Botas»-ը հաշվված օրերի ընթացքում լուծեցին «Երկնագույն հոսքով» մղվող բնական գազի ծավալների ավելացման հարցը եւ կարողացան լուծել Թուրքիայի արեւմտյան շրջանները գազով ապահովելու խնդիրը, թուրքական իշխանությունները հաջողությամբ օգտագործեցին ռուս-ուկրաինական հակասությունները սեփական քաղաքական եւ տնտեսական շահերի առաջնդման համար:

Հունվարի 19-ին Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հեռանկարների շուրջ բանակցությունների նպատակով Բրյուսելում

գտնվող Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանը կասկածի տակ առավ «Նաբուկո»-ի անցկացման տնտեսական նպատակահարմարությունը եւ հայտարարեց, որ իր երկիրը մտադիր է վերանայել մոտեցումն այդ նախագծի նկատմամբ: Նա նշեց նաեւ, որ Թուրքիան չի աջակցի «Նաբուկո» նախագծին, եթե Բրյուսելը չվերանայի դիրքորոշումը Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու հետ կապված էներգետիկ ոլորտի ազատականացման պահանջների շուրջ: «Եթե մենք էներգետիկ ոլորտին առնչվող քննարկումներում հայտնվենք փակուղային իրավիճակում, ապա, բնականաբար, կվերանայենք մեր դիրքորոշումը», – ասաց Էրդողանը՝ խոսելով «Նաբուկո»-ի եւ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցերի մասին:

Հարկ է նշել, որ Թուրքիան առաջին անգամ է, որ նման բարձր մակարդակով խոսում է «Նաբուկո» նախագծի իրականացման աննպատակահարմարության մասին: Ակնհայտ է, որ այդ երկրի դիրքորոշումը «Նաբուկո» նախագծի նկատմամբ արմատապես չի փոխվել եւ չէր էլ կարող փոխվել, քանի որ գազատարի կառուցումը հսկայական քաղաքական եւ տնտեսական օգուտներ է բերելու Թուրքիային: «Նաբուկոն» կասկածի տակ առնելու Էրդողանի հայտարարությունը պետք է դիտարկել իբրեւ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին արագացնելուն ուղղված շանտաժ, որը հնարավոր դարձավ իրականացնել հենց այն պահին, երբ Եվրոպան սեփական մաշկի վրա զգաց Ուկրաինայի տարածքով անցնող գազատարի անհուսալիությունը:

Էրդողանի բրյուսելյան քննադատական հայտարարությունից հետո սկսվեցին նրա բանակցությունները Եվրահանձնաժողովի նախագահ Բարոզուի հետ: Թուրքիա – ԵՄ բարձրամակարդակ բանակցություններից հետո Բարոզուն հայտարարեց, որ Թուրքիայի եւ Եվրամիության երկրների միջեւ, այնուամենայնիվ, ձեռք է բերվել պայմանավորվածություն «Նաբուկո» գազատարի կառուցման անհրաժեշտության մասին: Սակայն, Բարոզուի կարծիքով, կարիք չկա «Նաբուկոն» կապել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հետ, սակայն, միեւնույն ժամանակ, նա հայտարարեց, որ եթե Թուրքիան օգնի Եվրոպային դիվերսիֆիկացնել գազի մատակարարումը եւ թուլացնել կախվածությունը ռուսական վառելիքից, դա դրական ազդեցություն կունենա Եվրոպական հանրային կարծիքի վրա, որը դեռեւս զգուշավորությամբ է վերաբերվում Եվրամիությանը իսլամական խոշոր պետության անդամակցության հեռանկարին:

Հունվարի 20-ին Բարոզուն հանդես եկավ Թուրքիայի հետ աշխատանքների ակտիվացման առաջարկությամբ, որպեսզի այն օր առաջ կարողանա դառնալ ԵՄ անդամ, ինչը կբարձրացնի Եվրամիության նշանակությունը եւ «կամրապնդի նրա էներգետիկ անվտանգությունը»:

Հունվարն ավարտվեց Թուրքիա–ԵՄ հարաբերություններում Անկարայի դիրքերի ամրապնդման եւս երկու վկայություններով: Առաջին՝ հունվարի 27-ին Բուդապեշտում «Նաբուկո» գազատարի կառուցման հարցերի շուրջ հրավիրված գազաթափողովում եւս մեկ անգամ ընդգծվեց Թուրքիայի հատուկ նշանակությունը ԵՄ էներգետիկ եւ տնտեսական անվտանգության համար, կարեւորվեց նրա անդամակցությունը ԵՄ-ին: Երկրորդ՝ ԵՄ-ի համար Թուրքիայի աճող նշանակությունը, հավանաբար, հիմք տվեց այդ երկրի վարչապետին Ղավոսում ագրեսիվ, իսկ Եվրոպական ցանկացած ղեկավարի համար՝ անթույլատրելի վերաբերմունք դրսեւորել Իսրայելի նախագահ Շ.Պերեսի նկատմամբ: Միեւնույն ժամանակ, Թուրքիայի վարչապետի պահվածքը թելադրված էր եւս մեկ կարեւոր իրողությամբ. Թուրքիայի իսլամական վարչակարգն ավելի շատ է ջանում հանդես գալ մահմեդական աշխարհի շահերի ներկայացուցչի դերում: Վերջին զարգացումները, այդ թվում նաեւ կապված «Նաբուկո» նախագծին Իրանի միացմանն ուղղված քայլերի հետ, վկայում են այն մասին, որ թուրքական իշխանություններն իրենց այս քաղաքականությանը հաղորդել են նաեւ տնտեսական բաղադրիչ:

Իրանի ակտիվացումը տարածաշրջանային էներգետիկ նախագծերում

Վերջին շրջանում Թուրքիան փորձում է առանձնապես ընդգծել Իրանի դերը Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման հարցում: Ելույթ ունենալով Բյուրեսելի Եվրոպական քաղաքականության կենտրոնում՝ Երդողանը հայտարարեց, որ «Նաբուկո» գազամուղի աշխատանքի ապահովման համար հազիվ թե գտնվի տարեկան կտրվածքով անհրաժեշտ 30 մլրդ խմ գազ: Նրա խոսքերով՝ «Նաբուկո»-ն կարող է իմաստ ունենալ միայն այդ դեպքում, եթե դրանով գազ մղվի Եվրոպա ոչ միայն Ղազախստանից, Թուրքմենստանից եւ Ադրբեջանից, այլ նաեւ Իրանից: Թուրք-իրանական էներգետիկ համագործակցության ակտիվացման քննարկումներն սկսվել են դեռ տարեսկզբին, իսկ դրանց համար հիմք է հանդիսացել Իրանի խորհրդարանի խոսնակ Ալի Լարիջանիի այցն Անկարա, որի արդյունքում Իրանի եւ Թուրքիայի էներգետիկայի նախարարներին պաշտոնական հանձնարարական է տրվել՝ ակտիվացնել բանակցությունները գազի ոլորտում համագործակցության խորացման եւ ընդհանուր նախագծերի իրականացման վերաբերյալ: Դեռեւս 2001թ. կառուցված Թավրիզ–Էրզրում գազատարը բավական լավ հիմք է ստեղծում «Նաբուկո» նախագծին Իրանի միանալու համար: Այս գազատարով

Իրանից Թուրքիա վերջին տարիներին տարեկան արտահանվել է միջինը 8 մլրդ խմ գազ, այն պայմաններում, երբ գազատարի հնարավորությունները թույլ են տալիս եռակի ավելացնել արտահանվող գազի ծավալները:

Օգոստոսին Չարավային Կովկասում տեղի ունեցած իրադարձություններից հետո, երբ պարզ դարձավ, որ Կրաստանը՝ որպես էներգակիրների տարանցիկ երկիր, անհուսալի է, Թուրքմենստանի եւ Ղազախստանի՝ Չարավկովկասյան (Բաքու – Թբիլիսի – Էրզրում) գազամուղին միանալու հնարավորությունը կտրուկ նվազեց: Այսօր Ադրբեջանը, փաստորեն, միակ մեծկասայան երկիրն է, որը պատրաստ է դառնալ «Նաբուկո» նախագծի մասնակիցը ոչ թե թղթի վրա, այլ գործնականում: Ո՛չ Թուրքմենստանը, ո՛չ Ղազախստանն այս նախագծին միանալուն ուղղված ոչ մի քայլ չեն արել եւ առաջիկա տարիներին հազիվ թե անեն: Այս պայմաններում Անկարային պարզ է դարձել, որ «Նաբուկո» նախագծի իրականացման եւ անհրաժեշտ ֆինանսական ու քաղաքական դիվիդենդներ ստանալու համար անհրաժեշտ է ծրագրում ներառել նաեւ բնական գազի զգալի պաշարներ ունեցող Իրանին: Նման մոտեցում կա նաեւ Եվրոպայում՝ քաղաքական եւ տնտեսական դերակատարների մակարդակով: Բուդապեշտյան գազաթափողովին Իրանի հետ համագործակցության զարգացման անհրաժեշտության մասին հայտարարեցին «Նաբուկո» գազատարի նախագծի իրականացման աշխատանքներում ընդգրկված մասնավոր ընկերությունների ղեկավարները, այդ թվում՝ նախագծի հեղինակ եւ հիմնական լոբբիստ ավստրիական OMV Gas & Power GmbH ընկերության փոխնախագահ Ջ.Բոգարդը:

Հիմնական դժվարությունները, որոնք կարող են առաջանալ «Նաբուկոյին» Իրանի միանալու հետ կապված, պայմանավորված են Վաշինգտոնի դիրքորոշմամբ, քանի որ ամերիկյան նոր վարչակազմը, չնայած տարաբնույթ վերլուծություններին, դեռեւս չի մշակել եւ չի ներկայացրել սեփական «իրանական քաղաքականությունը»: Սակայն իրանա-ամերիկյան հարաբերությունների կարգավորման համար այսօր բավական լավ հիմքեր կան, մասնավորապես եթե հաշվի առնենք այն դժվարությունները, որոնք Վաշինգտոնի համար կծագեն դրողական «Մանասից» իրենց ռազմակայանի դուրսբերման հետ կապված: Սա կբերի Կենտրոնական Ասիայում ուժերի վերադասավորման, որն անմիջականորեն կազդի նաեւ Իրան-ԱՄՆ հարաբերությունների վրա:

Ձարգացումներ Կենտրոնական Ասիայում

Երկրի տարածքից ամերիկյան ռազմական ուժերը դուրս բերելու Ղրղըզստանի ղեկավարության որոշումն իրավիճակը տարածաշրջանում վերադարձնում է 2001 թվական, երբ Կենտրոնական Ասիայում ԱՄՆ-ը ընդհանրապես ռազմական ներկայություն չունեց: 2001-ին, երբ Մոսկվայի հետ համաձայնության գալուց հետո Վաշինգտոնը ռազմակայաններ բացեց Ուզբեկստանում եւ Ղրղըզստանում, ԱՄՆ գլխավոր նպատակն Աֆղանստանում ռազմական գործողություններ իրականացնելու անհրաժեշտությունն էր: Թալիբների վարչակարգի տապալումից հետո ռազմակայանները տարածաշրջանից դուրս չհանվեցին, չնայած տպավորություն էր ստեղծվել, թե աֆղանական հիմնահարցն ամբողջովին լուծվել է եւ այլեւս ամերիկյան ռազմակայանների պահպանման կարիք չկա: Ռուս-ամերիկյան հակասությունները ռազմակայանների շուրջ, որոնք ռուս վերլուծաբան Ֆ.Լուկյանովն անվանում է «նյարդերի պատերազմ», փաստորեն վերացան 2009-ի փետրվարին, երբ Ղրղըզստանի ղեկավարությունն ակնհայտ ռուսական ճնշման եւ փոխհատուցումների պայմաններում որոշում ընդունեց փակել ամերիկյան օդուժի «Մանաս» ռազմակայանը: Սա ռազմավարական բնույթի կարեւորագույն որոշում է, որը մատնանշում է տարածաշրջանում ռուսական դիրքերի ամրապնդման մասին: Ի տարբերություն 2003-ի, երբ Պենտագոնը Ուզբեկստանում եւ Ղրղըզստանում իր ռազմական ներկայության պահպանմանն ուղղված մտացածին փաստարկներ էր ներկայացնում, իրավիճակն այսօր միանգամայն այլ է. Վաշինգտոնին ռազմական ներկայությունը Կենտրոնական Ասիայում օդի պես է պետք, քանի որ վերջին երկու տարիներին իրավիճակն Աֆղանստանում իրապես լարվել եւ սպառնալի է դարձել: Եվ այս պայմաններում Ղրղըզստանն ու, փաստորեն, Ռուսաստանը ԱՄՆ-ին ստիպում են հեռանալ տարածաշրջանից:

Ինչպե՞ս է ԱՄՆ-ը այսօր լուծելու Աֆղանստանում սեփական զորքերի համալրման, մատակարարման եւ պաշտպանության հարցերը, երբ զրկված է Կենտրոնական Ասիայում ռազմակայաններ ունենալուց, եւ երբ Պակիստանն էլ ավելի վտանգավոր տարանցման գոտի է դառնում ամերիկացիների համար: Լուրերն այն մասին, թե Վաշինգտոնը փորձում է Տաջիկստանին առաջարկել նրա տարածքում ռազմաօդային կայան ստեղծել, իրականում խոսում են ամերիկյան դիրքերի կտրուկ թուլացման եւ իրավիճակի բարդության մասին: Տաջիկստանը ոչ միայն Ռուսաստանի դաշնակիցն է, այլեւ Իրանի հետ սերտ կապեր ու լայն համագոր-

ծակցություն ունեցող պետություն, այստեղ եւս քիչ չեն ԱՄՆ-ի նկատմամբ ատելությանը լցված իսլամիստներն ու ծայրահեղականները: Ակնհայտ է, որ եթե Վաշինգտոնը Մոսկվայի հետ համաձայնության չգա Տաջիկստանում ռազմական բացելու հարցի շուրջ, ապա նրան առնվազն պետք է Թեհրանի համաձայնությունը: Իրանը դեռ մինչեւ վերջերս քաղաքացիական պատերազմի մեջ գտնվող Տաջիկստանում իրավիճակը լարելու հսկայական ռեսուրսներ ունի, եւ առանց Իրանի համաձայնության՝ այստեղ ամերիկյան ռազմական ներկայության մասին խոսք անգամ չի կարող լինել:

Սա, իրականում, իրանա-ամերիկյան երկխոսության ակտիվացման կարելու խթան է: Այն կարող է սկսվել ոչ հիմա, այլ մի քանի ամսից, երբ Իրանը կթեւակոխի նոր նախագահական ընտրությունների փուլ:

Ինչեւէ, 2009-ի տարեսկիզբը լուրջ փոփոխություններ է մտցնում տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացներում, որոնք կարող են բերել նաեւ ընդհանուր իրավիճակի փոփոխության եւ ուժերի վերադասավորման:

ԱՄՆ–ՉԻՆԱՍՏԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՌԱՆԿԱՐԻ ՇՈՒՋ *Գազիկ Տեր-Չարությունյան*

Բազմաբեւեռ աշխարհակարգի առանցքային հիմնախնդիրներից են Միացյալ Նահանգներ–Չինաստան հարաբերությունները: Դրանց ուղղվածությունը եւ բովանդակությունը, ակնհայտորեն, էապես ազդելու են գլոբալ քաղաքակրթական, ռազմաքաղաքական եւ տնտեսական զարգացումների վրա: Մինչդեռ այն հարցում, թե ինչպիսի բնույթ են կրելու այդ հարաբերությունները, փորձագիտական մոտեցումները երբեմն տրամազօրեն տարբերվում են միմյանցից:

Քաղաքակրթական հակամարտություն. Ոմանք (գլխավորապես տնտեսագետ վերլուծաբանները) հակված են այն մտքին, թե ԱՄՆ-ը եւ ՉԺՀ-ն ֆինանսատնտեսական ոլորտում այնքան են սերտաճել (արդեն այսօր ամերիկյան ներկրումների ծավալի 10%-ը պատկանում է Չինաստանին), որ ապագայում տնտեսապես ինտեգրվելու եւ մի ամբողջություն են կազմելու: Ամերիկյան ականավոր տնտեսագետ Նայել Ֆերգյուսոնը այդ ամբողջությունը դիպուկ անվանել է «Չիներիա» (Chine–America բառակապակցությունից): Այլ կարծիքի են աշխարհաքաղաքական մտածելակերպ ունեցող փորձագետները. նրանք համոզված են, որ ԱՄՆ–ՉԺՀ մրցակցությունը սուր, անգամ՝ ռազմական բախումների տեսք է ընդունելու:

Այս ամենի առիթով նկատենք, որ գլոբալացվող աշխարհում խոշոր աշխարհաքաղաքական դերակատարների համար տնտեսական որոշ շահերի համընկնումը, դրանց այս կամ այն չափով ընդհանրականությունը գրեթե անխուսափելի են: Մասնավորապես, դրա մասին են վկայում ներկայիս ճգնաժամը հաղթահարելու նպատակով առաջատար երկրների ջանքերի համատեղման փորձերը: Միեւնույն ժամանակ, բնավ չանտեսելով նյութականի կարելությունը՝ կան առավել կարելու եւ առաջնային գործոններ:

Չինաստանի վերաբերյալ արեւմտյան խորքային հետազոտություններում հատուկ ընդգծվում են չինացիների արժեքային համակարգի ուրույնությունն ու գաղափարախոսական ճկունությունը, ինչը եւ, համաձայն հետազոտողների, այդ տերության ազգային անվտանգության հիմնական գրավականն է: Տպավորությունն այնպիսին է, որ ԱՄՆ–ՉԺՀ հարաբերու-

թյուններում ամենակարելորդն է համարվում հոգեւոր (գաղափարախոսական) եւ մտավոր ուղորտներում ընթացող մրցակցությունը: Հատկանշական է, որ ամերիկյան որոշ հետազոտական կենտրոնների փորձագետների առավել անհանգստացնում է ոչ այնքան Չինաստանի տնտեսական աճը, որքան այն, որ 2040թ. ԱՄՆ եւ ՉԺՀ գիտատեխնիկական զարգացածության ցուցանիշները հավասարվելու են: Համաձայն վերջերս մահկանացուն կնքած Սեմյուել Հանտինգտոնի մոտեցումների՝ *այդ երկու գերտերությունների միջև հակասությունները քաղաքակրթական հակամարտության դասական օրինակ են հանդիսանում*: Սակայն հայտնի է նաեւ, որ գաղափարախոսական մրցակցությունը ռազմական բախումների կարելորագույն նախապայմաններից է:

Ռազմական բախման սցենարներ. Վերոնշյալի համատեքստում՝ հետաքրքիր է անդրադառնալ Ռենդ կորպորացիայի եւ ամերիկյան այլ «ուղեղային կենտրոնների» կողմից մշակված «Ասիա - 2025» եւ «Միացյալ տեսլական - 2020» սցենարներից մեկին, որի անվանումն է «*Չինաստանը գործում է*»: Համաձայն այդ մշակման, 2015թ. Հարավային Կորեայում եւ Ճապոնիայում աճում են ազգայնական տրամադրությունները, սկսվում է երկու Կորեաների միացման գործընթացը: Այդ երկրների բնակչության բողոքի, ինչպես նաեւ ամերիկացիների դեմ ուղղված առանձին ահաբեկչական գործողությունների հետեւանքով, ԱՄՆ-ը ստիպված դուրս է բերում իր ռազմակայաններն այդ երկրներից: Իր հերթին, Չինաստանն ակտիվացնում է իր ռազմածովային ուժերը, որի հետեւանքով տեղի է ունենում չինական եւ ամերիկյան ռազմանավերի լոկալ զինված բախում: Քաղաքական տեսանկյունից թուլացած ԱՄՆ-ը ընկրկում է: Ստեղծված նոր իրողությունում Հնդկաստանը եւ Ճապոնիան վերիմաստավորում են իրենց քաղաքական հայեցակարգերը. նրանք ավելի են «հեռանում» Միացյալ Նահանգներից եւ ռազմավարական առումով կողմնորոշվում դեպի Չինաստան: Այդպիսով, Չինաստանը եւ նրա «կրտսեր» գործընկերներ Հնդկաստանն ու Ճապոնիան ռազմաքաղաքական գերակայություն են հաստատում Հարավասիական եւ Ասիա – Խաղաղօվկիանոսյան հսկայական տարածաշրջաններում՝ այնտեղից դուրս մղելով ԱՄՆ-ին: Բնորոշ է, որ նման միտումներ են արտահայտում նաեւ Սինգապուրում անցկացված (Ճապոնացի փորձագետների մասնակցությամբ) մի սցենարային խաղի արդյունքները, համաձայն որոնց՝ ԱՄՆ նահանջի պարագայում տարածաշրջանում ձեւավորվում է այսպես կոչված «Ասիական ՆԱՏՕ», որի կորիզն են կազմում Չինաստանը, Ճապոնիան եւ Միացյալ Կորեան:

Պատերազմական գործողությունների տեսանկյունից՝ այսօր հրատապ է նաեւ (գուցե եւ՝ առաջին հերթին) Թայվանի շուրջ ձեւավորված իրավիճակը: Այդ համատեքստում ուշադրության է արժանի այդ երկրի («Չինական հանրապետություն») ռազմական գերատեսչությունում 2006թ. կազմակերպված «Խսան Կուանգ» անվանումը կրող համակարգչային զինավարժությունը, որի ընթացքում մոդելավորվել է ՉԺՅ հարձակումը կղզու վրա: Համաձայն այդ շտաբային խաղի՝ ՉԺՅ զինված ուժերը կարողանում են խաթարել թայվանական բանակի կապի աշխատանքը եւ անսպասելի դեսանտ են իջեցնում կղզու հյուսիսում: Ռազմական գործողությունների արդեն չորրորդ օրը հարձակվողները սրընթաց առաջխաղացումով գրավում են Թայբեյ մայրաքաղաքը եւ հայտարարում իրենց հաղթանակի մասին:

Այս սցենարի կապակցությամբ նկատենք հետեւյալը: Այն, որ ՉԺՅ-ն ի գորու է հաշված օրերի ընթացքում գրավել Թայվանը, իհարկե, կասկած չի հարուցում: Սակայն դա առ այսօր տեղի չի ունեցել բացառապես կղզուն տրված ամերիկյան երաշխիքների եւ, գլխավորը, Թայվանյան նեղուցում պարեկություն իրագործող ԱՄՆ նավատորմի շնորհիվ: Մինչդեռ իրենց շտաբական խաղում թայվանյան զինվորականները կարծես թե համակերպվել են այն մտքի հետ, որ ԱՄՆ-ը հանուն Թայվանի լուրջ ռազմական քայլերի դիմելու պատրաստ չէ եւ հոգեբանորեն արդեն զիջել է կղզին մայրցամաքային Չինաստանին:

«Սառը պատերազմ». Ռազմաքաղաքական սցենարների եւ շտաբային խաղերի մշակումը պարտադիր ենթադրում է ամենաձայրահեղ տարբերակների դիտարկումը. դա թույլ է տալիս պատկերացնել հնարավոր զարգացումների ողջ տիրույթը եւ կազմակերպիչների մեջ ամբողջական պատկերացումներ ձեւավորել հետազոտվող խնդրի վերաբերյալ: Անշուշտ, ԱՄՆ – ՉԺՅ հարաբերություններում չի կարելի բացառել ռազմական զարգացումների հնարավորությունը: Սակայն միջուկային դարաշրջանում գերտերությունների միջեւ անմիջական ռազմական բախումը կարող է հանգեցնել փաստացի «պատմության ավարտին»: Այդ հանգամանքը, իհարկե, մրցակիցները գիտակցում են, եւ այդ իսկ պատճառով «տաք» պատերազմը կողմերի միջեւ գրեթե բացառվում է:

Այլ խնդիր է «սառը պատերազմը», որտեղ օգտագործվում են բոլոր միջոցները, բացի միջուկայինից: Բնորոշ է, որ դեռեւս 1992թ. Դեն Սյաոպինը հրապարակավ հայտարարեց, թե Միացյալ Նահանգների եւ Չինաստանի միջեւ «սառը պատերազմ» արդեն սկսվել է: Կարծում ենք, որ «իմաստուն Դենը» այդպիսով ոչ այնքան փաստում էր իրողությունը,

քանի որ այդ տարիներին Չինաստանը դեռևս հեռու էր գլոբալ համակարգում ուժային բեկեռ լինելուց, որքան շեշտում էր այն հանգամանքը, թե «սովետների» փլուզումից հետո Միացյալ Նահանգների հիմնական մրցակիցը հենց իր երկիրն է լինելու:

Այսօր Չինաստանն իրոք ձեռք է բերել երկրորդ ուժի կենտրոնի կարգավիճակ եւ վարում է իր ավանդական ռազմավարությունը՝ համադրելով ունեցած ռեսուրսները, քաղաքական իրողությունները եւ իր առջեւ դրված նպատակները, ձգտելով դրանց հասնել «փափուկ ուժի» միջոցով: Օրինակ, նույն Թայվանի խնդիրն այսօր կարծես շատ հեռու չէ քաղաքական միջոցներով լուծում գտնելուց. այդ կղզում 2008թ. նախագահական ընտրություններում զգալի առավելությամբ հաղթեց ընդդիմության ներկայացուցիչ Մա Ինցզյուն: Նա երկու երկրների խաղաղ ինտեգրման կողմնակից է, ծագումով՝ մայրցամաքային Չինաստանից, եւ համաձայն հատուկ ծառայությունների ոլորտի փորձագետների՝ հանդիսանում է «Պեկինի մարդը»: Կարելի է նաեւ այն հանգամանքը, որ այդ նախագահական ընտրություններում առկա էին «գունավոր հեղափոխությունների» բնորոշ տարրեր, այսինքն՝ Պեկինը լավագույնս յուրացրել է արեւմտյան այդ «տեխնոլոգիան» եւ հաջողությամբ կիրառում է այն իր մրցակցի նկատմամբ:

ԿՈՐԱԳԾ ԵՐ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՁ *Ֆյոդոր Լուկյանով*

Իսլամական հեղափոխության 30-ամյակն Իրանը նշանավորեց հրթիռի արձակմամբ, որը կոչված էր խորհրդանշելու շահական իշխանության տապալման ժամանակներից ի վեր զարգացման մասշտաբը: Միաժամանակ, Բարաք Օբամայի վարչակազմը դեռ չի հրաժարվում նախընտրական քարոզարշավի ժամանակ հնչեցրած՝ Իրանի հանդեպ մոտեցման փոփոխման մտադրությունից: Ազդանշանները, ճիշտ է, աղոտ են հնչում, այնուամենայնիվ, տարբերվում են նրանցից, որոնք ուղարկում էր նախորդ Սպիտակ տունը:

Օբյեկտիվորեն՝ Վաշինգտոնը Թեհրանի հետ հարաբերությունների կարգավորման մեջ շահագրգիռ է մի քանի պատճառով:

Առաջին. առանց Թեհրանի աջակցության Իրաքի կայունացումը եւ այնտեղից ամերիկյան զորքերի դուրսբերումն անհնարին է: Իրանը, թերեւս, միակ երկիրն է, որը 2003թ. ԱՄՆ-ի Իրաք ներխուժումից ու Սադամ Յուսեյնի վարչակարգի տապալումից միանշանակ կերպով շահել է: Իրանի երդվյալ թշնամին մահապատժի է ենթարկվել, իսկ իրանական ազդեցությունը տարածվել է Իրաքի մեծ մասի վրա:

Երկրորդ. Աֆղանստանի՝ տարածաշրջանի առավել պայթյունավտանգ շրջանի վերածվելուն զուգընթաց, իրավիճակի կայունացման գործում առաջ է գալիս հարեւան երկրների դերի հարցը:

Թեհրանը եւ «Ալ-Կաիդան» բացահայտորեն միմյանց նկատմամբ թշնամանք են տածում, իսկ Պակիստանի՝ այս հակամարտությունում առանցքային խաղացողի հանդեպ իրանցիները միաժամանակ վերաբերվում են ե՛ւ խանդով (որպես միջուկային տերություն), ե՛ւ քամահրանքով: Թեհրանին հարկավոր չէ թալիբների՝ սուննի արմատականների հաջողությունը, որոնք կապված են Սաուդյան Արաբիայի հետ, ում Իրանը համարում է իր գլխավոր ախոյանն իսլամական աշխարհում:

Իրանը լիովին ընդունակ է դառնալ տարածաշրջանային ազդեցիկ տերություն, որը կպահպանի ուժերի եւ շահերի հաշվեկշիռը Միջին Արեւելքում:

Երրորդ. Եվրոպայի էներգամատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացումը եւ Ռուսաստանից նրա կախվածության նվազեցումը, ինչը պնդում է Միացյալ Նահանգները, իրական են, եթե ապաշրջափակվի

Իրանի հետ համագործակցությունը: Մասնավորապես, միայն իրանական գազը կօգնի «Նաբուկո» նախագծին (որի մասին վերջին ժամանակներս այդքան խոսում են) ստանալ իրական իմաստ:

Անշուշտ, պետք չէ հնարավոր երկխոսության արագ հաջողության հույս ունենալ: Եթե նույնիսկ այն սկսվի, ապա արդեն կես ժամ անց պարզ կլինի, որ Իրանը չի պատրաստվում քննարկել միջուկային մշակումների իր իրավունքը, մինչդեռ ԱՄՆ-ը դրա հետ չի համակերպվի: Չխոսելով արդեն Իսրայելի անվտանգության գործոնի մասին, որն ընդունակ է փչացնել ցանկացած շփում Թեհրանի հետ. նրանից պետք չէ սպասել հրաժարում արմատական հակաիսրայելական դիրքից:

2009թ. Իրանում սպասվում են նախագահական ընտրություններ: Ի տարբերություն արաբական երկրների, որտեղ քվեարկության արդյունքները, որպես կանոն, կանխավ հայտնի են, իրանական քաղաքականությունը բազմակարծության եւ փոփոխականության որոշակի չափաբաժին թույլ է տալիս: Համենայնդեպս, անսպասելի էր ինչպես Մոհամադ Սեյեդ Խաթամիի հաղթանակը 1997թ., այնպես էլ Մահմուդ Ահմադինեժադինը՝ 2005-ին: Տնտեսական իրավիճակը երկրում բարվոք չէ, այնպես որ իշխանության փոփոխությունը չի բացառվում: Իսկ ցանկացած այլ անձի գալուստը թույլ կտա փոքր-ինչ լիցքաթափել իրադրությունը, թեև ոչինչ էապես չի փոխվի: Այնուամենայնիվ, մի մարդու ստվերում հայտնվելը, որը դարձել է հակասեմիտիզմի եւ ագրեսիվության խորհրդանիշ, կառողջացնի մթնոլորտը: Ընտրություններում Խաթամիի ենթադրյալ մասնակցության վերաբերյալ շշուկները նոր խոսակցություններ ծնեցին հաշտության հնարավորությունների մասին, որոնք ԱՄՆ-ը եւ Արեւմուտքը, ըստ որոշ մեկնաբանների տեսակետի, նրա կառավարման տարիներին բաց են թողել:

Իրանի հետ, առնվազն, ձեւականորեն առնչություն ունի մյուս սուր կոնֆլիկտը՝ կապված Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգի ապագայի հետ, որը հարուցում է Ռուսաստանի կտրուկ անդրադարձը: Ամերիկյան իշխանությունները մշտապես ասել են, որ ռադիոտեղորոշիչ կայանը Չեխիայում եւ հրթիռները Լեհաստանում կոչված են պաշտպանելու Եվրոպան Իրանի հնարավոր բախստիկ հրթիռներից: Մի կողմից՝ Մոսկվան դրան երբեք չի հավատացել, մյուս կողմից՝ 2007թ. Վլադիմիր Պուտինը Վաշինգտոնին առաջարկեց սպառնալիքի կանխարգելմանն ուղղված համատեղ աշխատանք՝ ռուսական ենթակառուցվածքի օգտագործմամբ: Հրթիռի արձակումն, ի դեպ, Ռուսաստանի համար վատ նորություն էր. Իրանն արդեն շատ համառորեն է փորձում մեծացնել իր ռազմական ներուժը՝ գործելով հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) կողմնակիցների օգտին:

Տեսականորեն, Իրանի հրթիռամիջուկային պաշտպանությանը վերաբերող խնդիրների լուծմանն ուղղված համալիր մոտեցում հնարավոր է: Այն Ռուսաստանից, Միացյալ Նահանգներից ու Եվրոպայից պահանջում է չափազանց լուրջ աշխատանք, իսկ հաջողության նախադրյալ է հանդիսանում մեկ պայման՝ որ ԱՄՆ ՅՕՊ-ն իրոք ուղղված է Իրանի դեմ եւ այլ թիրախներ չունի: Վերջինս ակնհայտ չէ: Գնահատելով միջազգային հարաբերությունների ընդհանուր կլիման՝ դժվար է ենթադրել, թե նման սցենարը հավանական է, թեեւ այստեղ էլ ազդանշանները հուսադրող զգուշությամբ են հնչում:

Օբամայի օրոք, ամերիկյան մոտեցման ջերմացման դեպքում, գրավիչ է ոչ թե պերճաշուք սկիզբը, այլ երկրորդ փուլը: Երկխոսության սկզբից եւ առաջին հիասթափությունից հետո Սպիտակ տունը կարող է կորցնել համբերությունն ու թեքվել կոշտության կողմը: Բարաք Օբամային առանց այն էլ կասկածում էին Միացյալ Նահանգների դիրքերի վճռական պաշտպանությանը պատրաստ չլինելու մեջ, ուստի հարկ կլինի դա առանձնակի համոզիչ կերպով հերքել: Միաժամանակ, ակնհայտորեն Օբամայի վարչակազմին անհամեմատ հեշտ կլինի ընդհանուր լեզու գտնել եվրոպացիների հետ, որոնք Բուշի հետնորդի նկատմամբ բացահայտ դրականորեն են տրամադրված: Դա նշանակում է, որ Ռուսաստանը կարող է իրանական հարցով զբաղվող «հնգյակում» որոշակի մեկուսացման մեջ հայտնվել:

Պատկերացնենք ոչ այնքան հավանական սցենար, երբ Մոսկվան, որին միջուկային Իրանը սկզբունքորեն ամենեւին էլ հարկավոր չէ, ինչ-որ պայմաններով որոշում է գնալ Վաշինգտոնին ընդառաջ եւ սկսում է սատարել Թեհրանի դեմ պատժամիջոցների խստացմանը: Բավական շուտ կծագի նոր երկընտրանք: Քչերն են լրջորեն հավատում, թե միջազգային պատժամիջոցներն ի զորու են հետ պահել Իրանին միջուկային ծրագրի հետագա զարգացումից: Պարզապես այն պատճառով, որ կա հարուստ փորձ, ինչը վկայում է, որ նման դեպքերում պատժամիջոցները չեն ազդում:

Եվ այդժամ հարց է առաջանում. իսկ ի՞նչ անել: Կա՛ն հաշտվել Թեհրանի ապագա միջուկային կարգավիճակի հետ եւ մտածել, թե ինչպես դրա հետ ապրել, կա՛ն էլ կրկին օրակարգում կհայտնվի ռազմական ուժի կիրառման հավանականությունն՝ իր անկանխատեսելի հետեւանքներով:

Մյուս ուշագրավ հարցը. իրո՞ք Ռուսաստանն ունի Թեհրանի վրա ազդեցության լծակներ, որոնք կստիպեն նրան ուղղել իր դիրքորոշումը: Նախորդ փորձը, թերեւս, վկայում է այն մասին, որ Իրանն ավելի արդյունավետ կերպով է մանիպուլացնում իր արտաքին գործընկերներին, քան նրանք իրեն: Նմանատիպ հարց, ի դեպ, կարելի է տալ Իսլամաբադին

վերահսկելու Վաշինգտոնի կարողության վերաբերյալ, որին համարում են ՆԱՏՕ սահմաններից դուրս ԱՄՆ գլխավոր դաշնակիցը:

Կարելի է ենթադրել, թե ինչ կսպասվի Մոսկվային, եթե թեհրանն ու Վաշինգտոնը, այնուամենայնիվ, միմյանց հանդիպակաց քայլեր անեն: Մերձեցումը կնշանակի.

– Իրանի մուտքը եվրոպական գազային շուկա, որտեղ իրանական արտադրանքը կլինի ռուսականի ամենավտանգավոր մրցակիցը,

– իրանական շուկայի բացում արեւմտյան տեխնոլոգիաների համար, ինչն անհամեմատ քիչ նպաստավոր դրության մեջ կդնի Ռուսաստանին, որը վաղուց փորձում է իր համար այդ շուկայից հատվածներ առանձնացնել (մասնավորապես՝ միջուկային էներգետիկան),

– թեհրանի հնարավոր ակտիվացում (Վաշինգտոնի թաքուն աջակցությամբ) կասպյան տարածաշրջանում, ուր առկա են բազում չկարգավորված խնդիրներ՝ ներառյալ բուն Կասպից ծովի բաժանումը:

Չնդկաստանի եւ Պակիստանի փորձը ցույց է տալիս, որ չի կարելի լիովին բացառել նաեւ Միացյալ Նահանգների առավել հանդուրժողական վերաբերմունքը «անօրինական» կերպով ձեռք բերված միջուկային կարգավիճակի նկատմամբ: Թեեւ, անշուշտ, ռազմատենչ ու հակաամերիկյան տրամադրություն ունեցող թեհրանի եւ Դելիի ու Իսլամաբադի միջեւ կա էական տարբերություն:

«Ежедневный журнал»

09.02.2009

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՄՂՁԱՎԱՆՁ

Հենրի Քիսինգեր

Ավելի քան երկու հարյուր տարի առաջ փիլիսոփա Իմանուիլ Կանտը ծեւակերպեց մարդկության հիմնական այլընտրանքը. եթե համաշխարհային պատմության գագաթնակետը պետք է լինի համընդհանուր խաղաղությունը, ապա ինչպե՞ս դրան հասնել. բարոյական լուսավորման կամ այնպիսի մասշտաբի աղետի ճանապարհով, որ այլ ելք չի կարգապես հնարավոր չէ: Մենք մոտենում ենք այն կետին, երբ, հավանաբար, հարկ է լինելու կատարել այդ ընտրությունը: Հիրոսիմայից հետո մենք կանգնել ենք միջուկային դարաշրջանի հիմնարար երկընտրանքի առջեւ. ինչպե՞ս կառուցել բարոյական կամ քաղաքական հարաբերություններ ժամանակակից զենքի ավերիչ կարողության եւ հետապնդվող նպատակների միջեւ:

«Սառը պատերազմի» երկբեւեռ աշխարհում ախտաններից հաջողվեց խուսափել այս երկընտրանքից: Երկու կողմերի միջուկային զինանոցները դառնում էին էլ ավելի խոշոր ու կատարելագործված: Եթե չհաշվենք Կարիբյան ճգնաժամը, երբ խորհրդային մարտական ստորաբաժանմանը նախապես թույլատրվել էր ինքնապաշտպանության նպատակով օգտվել առկա միջուկային զենքից, կողմերից ոչ մեկը երբեւիցե ընդհուպ չի մոտեցել դրա կիրառմանը՝ լինի դա մյուս կողմի դեմ, թե երրորդ երկրների հետ պատերազմներում: Նրանք դժբախտ պատահարների, սխալ գնահատականների եւ չթույլատրված արձակուրդների կանխման համար փուլ առ փուլ գործողության մեջ դրեցին անվտանգության միջոցների համակարգ:

Սակայն «սառը պատերազմի» ավարտը հանգեցրեց տարօրինակ արդյունքի: Գերտերությունների միջեւ միջուկային պատերազմի սպառնալիքը, մեծ հաշվով, վերացավ: Բայց տեխնոլոգիայի (հատկապես խաղաղատոմի) տարածումը միջուկային հզորության ստացումը դարձրեց անհամեմատ ավելի իրատեսական: Առավել հստակ գաղափարախոսական բաժանիչ գծերի հայտնվելը եւ տարածաշրջանային հակամարտությունների չլուծված լինելը ստեղծեցին նոր խթաններ միջուկային զենքի ստացման համար, հատկապես «վտարյալ» երկրների եւ ոչ պետական դերակատարների մոտ: Ենթադրյալ փոխադարձ խոցելիությունը, որը «սառը պատերազմի» տարիներին զսպում էր երկու կողմերին, միջուկային

դաշտում նոր խաղացողների (առավել եւս՝ ոչ պետական դերակատարների) համար ամենեւին չի կարող նույնքան կարեւոր գործոն հանդիսանալ:

Միջուկային զենքի հնարավոր հետագա տարածումը մեծացնում է միջուկային առճակատման հավանականությունը եւ գիտակցված կամ չգիտակցված սադրանքների վտանգը: Իսկ եթե բոլոր շարունակվող բանակցությունների խորապատկերի վրա՝ Իրանում սկսվի միջուկային զենքի մշակումը եւ շարունակվի Զյուս. Կորեայում, ապա մյուս երկրների մոտ նրանց օրինակին հետեւելու ամենալուրջ հիմքեր կառաջանան:

«Առանց միջուկային զենքի աշխարհը» կմնա հեռավոր ապագային, եթե չդադարեցվեն Իրանի (մշակվող) եւ Զյուս. Կորեայի (արդեն գոյություն ունեցող) միջուկային ծրագրերը: Դրանցից յուրաքանչյուրը գրեթե հաստատապես կհանգեցնի միջուկային զենքի հետագա տարածմանը եւ ապագայում միջուկային պետությունների ռազմավարության մեջ նրաներառմանը: Իրանի դեպքում՝ Անվտանգության խորհրդի մշտական անդամները կոչ արեցին դադարեցնել նյութերի հարստացումը, որոնք արտադրվում էին ատոմային էներգետիկայի նպատակների համար ծրագրի շրջանակներում: Զյուս. Կորեայի դեպքում՝ Չինաստանը, Ռուսաստանը, Ճապոնիան, Զարավ. Կորեան ու Միացյալ Նահանգները պահանջեցին ոչնչացնել նրա միջուկային զենքը: Զյուս. Կորեան համաձայնեց դադարեցնել միջուկային ծրագիրը, սակայն, մշտապես հետաձգելով այդ քայլը, սպառնում է օրինականացնել իր՝ արդեն իսկ ստեղծած միջուկային զինանոցը:

Ես վաղուց եմ հանդես գալիս հարցերի լայն շրջանակների (ներառյալ աշխարհաքաղաքական) շուրջ Իրանի հետ բանակցությունների օգտին: Շատերը դա համարում են յուրատեսակ հոգեբանական փորձություն: Իրականում, նրանց արդյունավետության չափանիշը կլինեն հստակ պատասխանները չորս միանգամայն որոշակի հարցերին.

ա) որքա՞ն է Իրանը մոտ միջուկային ներուժի ստեղծմանը,

բ) ինչպիսի՞ տեմպերով է ընթանում նրա ծրագրի մշակումը,

գ) ազդակների ու պատժամիջոցների ինչպիսի՞ հարաբերակցությունը կդրդի Իրանին հրաժարվել ծրագրից,

դ) ի՞նչ պիտի անենք, եթե, չնայած մեր բոլոր ջանքերին, դիվանագիտությունը չբերի ցանկալի արդյունք:

Չտարածման ռազմավարության կարեւոր կրիտիկական տարրը կլինի միջազգային հանրության ունակությունը՝ վերահսկողություն հաստատելու միջուկային վառելիքային ցիկլի վրա: Ընդունա՞կ է, արդյոք, Ատոմային

էներգիայի միջազգային գործակալությունը ստեղծել համակարգ, որը միջազգային վերահսկողություն կսահմանի պլուտոնիումի հարստացման ու վերամշակման վրա եւ այդ պրոցեսները կտեղափոխի այնտեղ, ուր միջուկային զենքի տարածման հավանականությունը հասցված է զրոյի:

Միջուկային զենքի տարածումը դադարեցնելու եւ նրա ոչնչացմանը ձեռնամուխ լինելու համար միջուկային «հին» տերությունները պետք է իրենց վրա առանձնակի պատասխանատվություն վերցնեն: Նրանք չունեն առավել կենսական ընդհանուր շահ, քան միջուկային զենքով նոր պետությունների առաջացման կանխումը: Չլուծված տարածաշրջանային հակամարտությունների առկայությունը միջուկային զենքը դարձնում է մեծ գայթակղություն աշխարհի շատ մասերում. նրանով կարելի է վախեցնել հարեւաններին ու զսպել մեծ տերություններին, որոնք, հակառակ դեպքում, կարող են միջամտել տարածաշրջանային հակամարտությանը: Միջուկային «հին» տերությունները պետք է ձգտեն նվազեցնել միջուկային հզորության գրավչությունը՝ դիվանագիտական ջանքեր գործադրելով առկա հակամարտությունների լուծման ուղղությամբ:

Միջուկային ուլորտի նոր օրակարգը պահանջում է.

ա) ամերիկա-ռուսական համագործակցություն,

բ) համատեղ ջանքեր դաշնակիցների, ինչպես եւ՝ այլ ոչ միջուկային պետությունների հետ, որոնց համար զսպման ամերիկյան ներուժը ծառայում է որպես սեփական անվտանգության ապահովման միջոց,

գ) գլոբալ հարթությունում միջուկային զենքի եւ նյութերի հուսալի պահպանման ապահովում,

դ) միջուկային պետությունների համապատասխան դոկտրիններում միջուկային զենքի դերի նվազեցում:

Երեսուն տարուց ավելի խորհրդային վտանգը եղել է Արեւմուտքի միջուկային քաղաքականությունը հիմնավորող եւ միավորող ուժը: Այսօր, երբ խորհրդային Միությունն այլեւս գոյություն չունի, կարելու է զգուշացնել ինքնին կատարվող մարգարեության վրա քաղաքականության ձեւավորման անթույլատրելիության մասին: Ռուսաստանը եւ Միացյալ Նահանգները միասին վերահսկում են համաշխարհային միջուկային զինանոցի շուրջ 90 տոկոսը: Նրանց ուժը ներում է երկկողմանի հարաբերություններում նվազեցնելու միջուկային զենքի դերը: Եվ դա նրանք վերջին 15 տարիներին անում են այնպիսի նախաձեռնությունների շրջանակներում, ինչպիսին է «Հանուն վտանգի համատեղ նվազեցման» ծրագիրը: Ներկա պահին, նախեւառաջ, անհրաժեշտ է սկսել ՀՍԿ-1 (հարձակողական սպառազինությունների կրճատում) պայմանագրի երկարաց-

ման վրա աշխատանքները. միակ փաստաթուղթը, որը սահմանում է ռազմավարական սպառազինությունների որոշված չափերի վերիֆիկացման ու մոնիթորինգի կարգը, որի գործողության ժամկետը լրանում է 2009թ. վերջին: Դա առիթ կհանդիսանա քննարկելու մարտագլխիկների թվի զգալի կրճատման (2002թ. Մոսկովյան պայմանագրով սահմանված 1700-2000 միավորի համեմատ) հարցը:

Վաղուց առանցքային խնդիր է հանդիսանում հակահրթիռային պաշտպանությունը՝ հատկապես այն, որը վերաբերում է միջուկային տեխնոլոգիաներ տարածող երկրներից եկող սպառնալիքներին: Այս թեմայով երկխոսությունը պետք է սկսել այն կետից, որտեղ 2008թ. ապրիլին այն ընդհատել էին նախագահներ Բուշը եւ Պուտինը: Մերձավոր Արեւելքից եկող սպառնալիքներին դիմագրավելու համար հակահրթիռային պաշտպանության համատեղ համակարգի ստեղծման մասին ռուսական առաջարկությունը, որը նախատեսում է ռադիոտեղորոշիչ կայանի օգտագործում Ռուսաստանի հարավում, ինձ թվացել է որպես քաղաքական ու ռազմավարական ստեղծագործական պատասխան ընդհանուր խնդրին:

Միջուկային ոլորտի նոր օրակարգի մշակմանն ուղղված ջանքերը պետք է ամենասկզբից ենթադրեին մեր դաշնակիցների մասնակցությունը: ԱՄՆ քաղաքականությունն անբաժան է ՆԱՏՕ քաղաքականությունից: Եվրոպական առանցքային երկրներն Իրանի հետ միջուկային խնդրով բանակցություններ են վարում: Ամերիկյան մարտավարական միջուկային զենք է տեղակայում ՆԱՏՕ մի շարք երկրներում, իսկ ՆԱՏՕ հռչակագրային քաղաքականությունն արտացոլում է Միացյալ Նահանգների համանման քաղաքականությունը: Բրիտանիան ու Ֆրանսիան՝ ՆԱՏՕ գծով կարելու դաշնակիցները, ունեն զսպման սեփական ներուժ: Անհրաժեշտ է ընդհանուր ջանքերով ադապտացվել նոր իրողություններին, հատկապես երբ այն վերաբերում է մարտավարական միջուկային զենքին: Անհրաժեշտ է ճապոնիայի, Չարավ. Կորեայի եւ Ավստրալիայի հետ անցկացնել զուգահեռ խորհրդակցություններ: Նման խորհրդակցություններ պարտադիր կերպով պետք են նաեւ Չինաստանի, Չնդկաստանի ու Պակիստանի հետ:

Վերջում նշենք, որ թեման, ի սկզբանե լինելով ռազմական փորձագետների սեփականությունը, իր վրա է հրավիրել զինաթափման կողմնակիցների համակ ուշադրությունը: Նրանց միջեւ երկխոսությունը ոչ միշտ է եղել այնքան արգասավոր, որքան պետք էր: Ռազմավարները կասկածով են վերաբերվում բանակցությունների ճանապարհով զինանոց-

ների կրճատման փորձերին: Ջինաթափման կողմնակիցները երբեմն փորձում են բանավեճերի ելքը կանխորոշել սահմանափակումների օրենսդրական ձևակերպման ճանապարհով՝ այն սկզբունքով, որ այն ամենը, ինչն օժանդակում է միջուկային զինանոցի սահմանափակմանը, ինքնին բարիք է:

Անհրաժեշտ է երկխոսություն հաստատել այդ երկու խմբերի միջև: Քանի դեռ մյուս երկրներն ավելացնում եւ կատարելագործում են իրենց միջուկային զինանոցները, դրանց կիրառման զսպումը պետք է մնա արեւմտյան ռազմավարության մի մասը: Անհրաժեշտ է պահպանել մեր զենքի արդյունավետությունը: Ծրագիրը, որի ուրվագծերը վերը ներկայացվեցին, միակողմանի զինաթափում չի ենթադրում: Միացյալ Նահանգները չեն կարող դրան միայնակ հասնել:

Միջուկային զենքը ստեղծում է աննախադեպ սպառնալիք: Այն չպետք է ընդգրկվի ռազմավարության մեջ որպես եւս մեկ՝ պարզապես առավել արդյունավետ զենքի տեսակ: Այդպիսով, մենք վերադառնում ենք սկզբնական մարտահրավերին:

Մեր դարն աստվածներից գողացավ կրակը. կտվորե՞նք, արդյոք, մենք նրա կիրառումը սահմանափակել միայն խաղաղ նպատակներով, քանի դեռ այն մեզ չի խժռել:

«Newsweek», ԱՄՆ
փետրվար, 2009

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ռուբեն Մելքոնյան

ԷԹՆԻԿ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ 1

Սուրեն Մանուկյան

ԻՍՐԱՅԵԼԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑԸ 5

Արաքս Փաշայան

ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.
ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ 14

Սարգիս Հարությունյան

ԹՈՒՐՔԻԱ. ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 21

Սեւակ Սարուխանյան

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ 26

Գագիկ Տեր-Հարությունյան

ԱՄՆ–ՉԻՆԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՌԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՋ 32

Ֆյոդոր Լուկյանով

ԿՈՐԱԳԾԵՐ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ 36

Հենրի Քիսինջեր

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՄՂԱՎԱՆՋ 40

*Շապիկին պատկերված է
Առնոս Լեռը (3550 մ, Մոկս)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Ադամյան 2: *Հեռ. 58 04 91, 58 04 83:*
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: